

3204



Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱՐԱՔ—ՔՈՂՈՔԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ • 1938

3133
Խ - 11

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՇՎ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒԹ

•N^o 11 - 7-8

Կ. Վ. Ս. Ա. Լ. Ի. Ե

21 JUN 2005

3K33
fu-11 ար.

=1 DEC 2009

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Ա
11 մ

ԶԵԿԹԻՑՈՒՄ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՐՏԱԿԱԾ.ՐԳ. VIII
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
1936 թվի նոյեմբերի 25-ին

Զորբորդ հրատարակություն

ՊԵՏՀՐԱՑ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

05.08.2013

3204

Ընկեր Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ
Խորհուրդների VIII Համամիութենական
Արտակարգ Համագումարում
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՍՀՄՍՆՍ.ԴՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՄՍՍԻՆ

1936 թ. նոյեմբերի 25-ին

Ընկեր ՍՏԱԼԻՆԻ, տրիբունի վրա յերկալը դիմավոր-
վում է ամրող դահլիճի յերկարատև, փորորկալի ովացի-
այով։ Ամրող դահլիճը վոտֆի յե կանգնում։ Բոլոր կող-
մերից հնչում են բաշականչություններ՝ «Ուսա՛ ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ», «Կեցցե՛ ընկեր ՍՏԱԼԻՆԸ», «Կեցցե՛ ՄԵծ ՍՏԱ-
ԼԻՆԸ», «ՄԵծ հանճար ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ ուռա՛», «Վի՛-
վատ», «Ուստ Փրո՛նտ», «Փա՛ռք ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ»։



■. В. СТАЛИН
О ПРОЕКТЕ КОНСТИТУЦИИ
СОЮЗА ССР
Доклад на Чрезвычайном
VIII Всесоюзном Съезде Советов

Արմգլա-Издательство
политической литературы.
Երևան 1936

I

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿԱԶՄՈՒՄԸ ՑԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԸՆԿԵՐՆԵՐ :

Սահմանադրական Հանձնաժողովը, վորի նախադիմը
ներկայացված ե այս Համագումարի քննարկմանը, կազմ-
վել ե, ինչպես Հայտնի յէ, ԽՍՀ Միության Խորհուրդների
VII Համագումարի հատուկ վորոշման համաձայն։ Այդ վո-
րոշումն ընդունվել ե 1935 թվի փետրվարի 6-ին։ Նա
տառում ե.

«1. ԽՍՀ Միության Սահմանադրության մեջ փո-
փոխություններ մտցնել հետեւյալ ուղղությամբ։

ա) ընտրական սիստեմի հետապա դեմոկրատաց-
ման՝ վոչ լիովին հայլասար ընտրությունները հայտ-
ար ընտրություններով՝ փոխարինելու իմաստով,
բազմաստիճան ընտրություններն՝ ուղղակի ընտրու-
թյուններով, բաց ընտրությունները՝ վակ ընտրու-
թյուններով՝ փոխարինելու իմաստով։

բ) Սահմանադրության սոցիալ-անտեսական հիմքը
ճշգրտելու ուղղությամբ՝ Սահմանադրությունը ԽՍՀՄ
դասակարգային ուժերի այժմյան փոխհարթերու-
թյունների հետ համապատասխանեցնելու իմաստով
(նոր սոցիալիստական ինքուստրիալի ստեղծումը,
կուլակության ջախջախումը, կոլտնտեսային կարդերի
հաղթությունը, սոցիալիստական սելքականության՝
վորպես խորհրդային հասարակության հիմքի՝ հաստա-
տումը և այլն)։

2. Առաջարկել ԽՍՀ Միության, Կենտրոնական Գործադրության՝ ընտրել Սահմանադրական Հանձնաժողով, վորին հանձնարարել առաջին կետում մատնանշված հիմունքներով, մշակել Սահմանադրության ուղղված տեքստը և ներկայացնել այն ԽՍՀ Միության Կենտրոնական իշխանություն:

3. ԽՍՀ Միության մեջ խորհրդային իշխանության մարմինների մոտակա հերթական ընտրությունները կատարել նոր ընտրական սիստեմի հիման վրա»:

Այս 1935 թվի փետրվարի 6-ին եր: Այս վորոշումն ընդունելուց մի որ հետո, այսինքն՝ 1935 թվի փետրվարի 7-ին, հավաքվեց ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադրության կոմիտեի Առաջին Նստաշրջանը և, ի կատարումն ԽՍՀՄ Խորհրդների VII Համագումարի վորոշման, կազմեց 31 հոգուց բաղկացած Սահմանադրական Հանձնաժողովը:

Նահանձնարարեց Սահմանադրական Հանձնաժողովին մշակել ԽՍՀՄ ուղղված Սահմանադրության նախադիմ:

Մրանք են այն ձևական հիմունքները և ԽՍՀՄ դերադույն մարմնի դերեկատիվները, վորոնց հիման վրա իր աշխատանքը պետք է ծավալեր Սահմանադրական Հանձնաժողովը:

Այսպիսով Սահմանադրական Հանձնաժողովը պետք է փոփոխություններ մտցներ 1924 թվին ընդունված այժմ դորձող Սահմանադրության մեջ, ընդունին հաշվի առնելով սոցիալիզմի ուղղությամբ կատարված այն տեղաշարժերը ԽՍՀ Միության կյանքի մեջ, վորոնք իրականացվել են 1924 թվից մինչև մեր որերն ընկած ժամանակաշրջանում:

II

1924 ԹՎԻՑ ՄԻՆՉԵՎ 1936 ԹԻՎՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՍՈՒՄ ԽՍՀՄ ԿՅԱՆՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Վորոշնքեն ԽՍՀՄ կյանքում տեղի ունեցած այն փոփոխությունները, վոր իրադրության 1924 թվից մինչև 1936 թվին ընկած ժամանակաշրջանում և վորոնք պետք է արտացոլեր Սահմանադրական Հանձնաժողովը Սահմանադրության իր նախադումը:

Վորոշնք և այդ վորոխությունների եյությունը:

Ի՞նչ ունեցինք մենք 1924 թվին:

Դա ՆԵՊ-ի առաջին շրջանն էր, յերբ Խորհրդային իշխանությունը թույլ տվեց կապիտալիզմի վորոշ աշխատացում՝ սոցիալիզմի ըստ ամենայնի զարգացման հետ միասին, յերբ Խորհրդային իշխանությունը նկատի ուներ ալնտեսության յերկու սիստեմների՝ կապիտալիստականի և սոցիալիստականի՝ մրցության ընթացքում կազմակերպել սոցիալիստական սիստեմի դերակառությունը կապիտալիստականի հանդեպ: Խնդիրն այն եր, վոր այդ մրցության ընթացքում ամբացնելինք սոցիալիզմի դիրքերը, հասնելինք կապիտալիստական սիստեմի՝ վերացմանը և ալյարելինք սոցիալիստական սիստեմի՝ հաղթությունը:

Մեր արդյունաբերությունը, առանձնապես ծանր արդյունաբերությունը, այն ժամանակ աննախանձելի պատկեր եր ներկայացնում: Ճիշտ է, նա քիչ առ քիչ վերականգնվում եր, բայց դեռ շատ հեռու յեր իր արտադրանքը

Նախապատերազմյան մակարդակին հասցնելուց : Նա հիմնըվում եր Հին, հետամնաց և վոչ-հարուստ տեխնիկայի վրա : Իհարկե, նա դարձանում եր գեղի սոցիալիզմը՝ Մեր արդյունաբերության սոցիալիստական հատվածի տեսակարար կշխոն այն ժամանակ կազմում եր մոտավորապես 80 տոկոս : Բայց կապիտալիզմի հատվածն, այնուամենայնիվ, իր կողմն ուներ արդյունաբերության վոչ սրակառան 20 տոկոսը :

Մեր գյուղատնտեսությունն ե'լ ավելի անհրապույր պատկեր եր ներկայացնում : Ճիշտ է, կալվածատերերի դասակարգըն արդեն վերացված եր, բայց դրա փոխարեն գյուղատնտեսական կապիտալիստների դասակարգը, կուլակների գյուղակարդը, գեռես բավական նշանակալից ուժ եր ներկայացնում : Ամբողջությամբ առած՝ գյուղատնտեսությունն այն ժամանակ հիշեցնում եր անհատական գյուղացիական մանր տնտեսությունների մի անձայրածիր ովկիսանոս՝ իրենց հետամնաց միջնադարյան տեխնիկայով : Այդ ովկիսանոսում իբրև առանձին կետեր ու փոքրիկ կղզիներ գյուղություն ունեյին կոլանտեսություններ և խորհանտեսություններ, վորոնք, խիստես ասած, մեր ժողովրդական տնտեսության մեջ գեռես փոքրիշատե լուրջ նշանակություն չունեյին : Կոլոնտեսություններն ու խորհանտեսությունները թույլ եյին, իսկ կուլակը գեռես պահպանում եր իր ուժը : Այն ժամանակ մենք խոսում եյինք վո՞չ թե կուլակության վերացման, այլ նույ տահմանափակման մասին :

Նույնը պետք է ասել նաև ապրանքաշրջանառության ժամանելում : Ապրանքաշրջանառության մեջ սոցիալիստական հատվածը կազմում եր ինչ-վոր 50—60 տոկոս, — վոչ ավելի, իսկ ամբողջ մնացած ասպարեզը զրավված եր վաճառականների, սպեկուլանտների և այլ մասնավորների կողմից :

Այս եր մեր եկոնոմիկայի պատկերը 1924 թվականին :

Ի՞նչ ունենք մենք այժմ, 1936 թվականին :

Յեթե այն ժամանակ մենք ունեյինք ՆեՊ-ի առաջին

ժամանակաշրջանը, ՆեՊ-ի սկիզբը, կապիտալիզմի վորոշաշխուժացման ժամանակաշրջանը, ապա այժմ մենք ունենք ՆեՊ-ի վերջին ժամանակաշրջանը, ՆեՊ-ի վախճանը, կոպիտալիզմի լիակատար վերացման ժամանակաշրջանը՝ ժողովրդական տնտեսության բոլոր վորոտներում :

Սկսենք թեկուզ նրանից, վոր այդ ժամանակաշրջանում մեր արդյունաբերությունն աճեց, դարձավ մի վիթխարիսուժ : Այժմ արդեն չեւ կարելի այն թույլ և տեխնիկական վատ դինված անվանել : Ընդհակառակը, այն հիմնված է այժմ նոր, ժամանակակից հարուստ տեխնիկայի վրա՝ ուժեղ կերպով զարգացած ծանր ինդուստրիայով և ե'լ այլիլով զարգացած մեքենաշինությամբ : Իսկ ամենից զվարավորն այն է, վոր կապիտալիզմն խսպառ վտարված է մեր արդյունաբերության վոլորտից, իսկ արտադրության սոցիալիստական ձևն այժմ անբաժանելիորեն տիրապետող սիստեմ է հանդիսանում մեր արդյունաբերության բնադավառում : Զի կարելի մանրունք համարել այն փաստը, վոր մեր այժմյան սոցիալիստական ինդուստրիան, արտադրանքի ծավալի տեսակետից, ավելի քան յոթն անգամ գերազանցում է մինչպատերազմյան ժամանակի ինդուստրիայից :

Գյուղատնտեսության բնադավառում մանր անհատական գյուղացիական տնտեսությունների ովկիսանոսի փոխարեն՝ նրանց թույլ տեխնիկայով և կուլակի գերուժությամբ՝ այժմ մենք ունենք աշխարհիս ամենախոշոր մեքենայացված, նոր տեխնիկայով դինված մի արտադրություն՝ կոլոնտեսությունների ու խորհանտեսությունների՝ համայնապարփակ սիստեմի ձևով : Բոլորին հայտնի յե, վոր կուլակությունը գյուղատնտեսության մեջ վերացված է, իսկ գյուղացիական մանր անհատական տնտեսությունների հատվածը՝ նրա հետամնաց միջնադարյան տեխնիկայով՝ այժմ անհշան տեղ է զրավում, ընդվորում նրա տեսակարար կշիռը գյուղատնտեսության մեջ՝ ցանքի տարածության չափի իմաստով՝ 2—3 տոկոսից ավելի չեւ կազմում : Զի կարելի չնշել այն փաստը, վոր այժմ կոլոնտեսություններն իրենց տրամադրության տակ ունեն 316 հազար տրակտոր՝

5.700.000 ձիու ուժի կարողությամբ, իսկ խորհանուեսությունների հետ միասին ունեն ավելի քան 400 հազար տրակտոր՝ 7.580.000 ձիու ուժի կարողությամբ:

Ինչ վերաբերում եւ ապրանքաշրջանառությանը յերկրում, ապա վաճառականներն ու սպեկուլանտներն խսպառվարված են այդ բնագավառուց: Այժմ ամբողջ ապրանքաշրջանառությունը դանվում է պետության, կոռարեցիայի և կոլտնտեսությունների ձեռքում: Ծնունդ առավ ու զարգացալ նոր, խորհրդային առևտուրը, առևտուր առանց սպեկուլանտների, առևտուր առանց կապիտալիստների:

Այսպիսով սոցիալիստական սիստեմի վականար հաղթությունը ժողովրդական տնտեսության բոլոր վոլորտներում այժմ փաստ եւ:

Իսկ ի՞նչ ե նշանակում այս:

Այս նշանակում ե, վոր մարդու շահագործումը մարդու կողմից վոչչացված ե, վերացված ե, իսկ արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը հաստատված ե վորպես մեր խորհրդային հասարակության անսասան հիմքը: (Յերկարածմ. ծափակարություններ):

Վորպես արդյունք ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության բնագավառում տեղի ունեցած այդ բոլոր փոփոխությունների՝ այժմ մենք ունենք նոր, սոցիալիստական եկոնոմիկա, վորը չգիտե ճշնաժամեր ու գործադրկություն, չգիտե աղջառառություն ու քայլայում և վորը տալիս է քաղաքացիներին բոլոր հնարավորություններն ունենոր ու կուտուրական կյանքի համար:

Սրանք են հիմնականում այն փոփոխությունները, վորոնք տեղի ունեցան մեր եկոնոմիկայի բնագավառում 1924 թվից մինչև 1936 թիվն ընկած ժամանակամիջոցում:

ԽՍՀՄ եկոնոմիկայի բնագավառում տեղի ունեցած այդ փոփոխություններին համարատասխան՝ փոխվեց նաև մեր հասարակության դասակարգյին կառուցվածքը:

Կալվածատերերի դասակարգը, ինչպես հայտնի յեւ, արդեն վերացված եր քաղաքացիական պատերազմի հաղ-

թական ավարտման հետեւանքով: Ինչ վերաբերում եւ մյուս շահագործող դասակարգերին, ապա նրանց ել բաժին ընկալ կալվածատերերի դասակարգի բախտը: Զկա այլևս կապիտալիստների դասակարգն արդյունաբերության բնագավառում: Զկա այլևս կուլակների դասակարգը գյուղատնտեսության բնագավառում: Զկան այլևս վաճառականներն ու սպեկուլանտներն ապրանքաշրջանառության բնագավառում: Այդպիսով դուրս յեկալ, վոր բոլոր շահագործող դասակարգերը վերացվեցին:

Մնաց բանվոր դասակարգը:

Մնաց գյուղացիների դասակարգը:

Մնաց ինտելիգենցիան:

Բայց սիալ կլիներ կարծել, վոր այս սոցիալական խմբերն այդ ժամանակամիջոցում վոչ մի փոփոխություն չկրեցին, վոր նրանք մնացին այնպես, ինչպես եյին, առենք, կապիտալիզմի ժամանակաշրջանում:

Վերցնենք, որինակ, ԽՍՀՄ բանվոր դասակարգը: Լսուին հիշողության՝ նրան հաճախ կոչում են պրոլետարիատ: Բայց ի՞նչ ե պրոլետարիատը: Պրոլետարիատը մի դասակարգ ե, վոր զրկված ե արտադրության գործիքներից ու միջոցներից, անտեսության մի այնպիսի սիստեմի ժամանակ, յերբ արտադրության գործիքներն ու միջոցները ոլատկանում են կապիտալիստներին և յերբ կապիտալիստների դասակարգը շահագործում ե պրոլետարիատին: Պրոլետարիատը՝ կապիտալիստների կողմից շահագործվող դասակարգն ե: Բայց մեզ մոտ, ինչպես հայտնի յեւ, կապիտալիստների դասակարգն արդեն վերացված ե, արտադրության գործիքներն ու միջոցները խլմած են կապիտալիստների ձեռքից և հանձնված պետությանը, վորի դեկալար ուժը հանդիսանում է բանվոր դասակարգը: Հետեւաբար, չկա այլևս կապիտալիստների դասակարգը, վորը կարողանար շահագործել բանվոր դասակարգին: Հետեւաբար, մեր բանվոր դասակարգը վո՛չ միայն զրկված չե արտադրության գործիքներից ու միջոցներից, այլ, ընդհակառակը, նա զրանց տերն ե ամբողջ ժողովրդի հետ միասին: Իսկ

քանի վոր նա գրանց տերն է, իսկ կապիտալիտաների դասաւակարգը վերացված է, —բացառված և բանվոր դասակարգի շահագործման ամեն մի հնարավորություն։ Կարելի՞ յե արդյոք դրանից հետո մեր բանվոր դասակարգը պրոլետարիատ անվանել։ Պարզ է, վոր չի կարելի։ Մարքսն առում եր, վորպեսզի պրոլետարիատն աղասադրի իրեն, նա պետք է ջախջախի կապիտալիտաների դասակարգը, իսկ կապիտալիտաներից արտադրության գործիքներն ու միջոցները և վոչնչացնի արտադրության այն պայմանները, վորոնք պրոլետարիատ են ծնում։ Արդյոք կարելի՞ յե ասել, վոր ԽՍՀՄ բանվոր դասակարգն արդեն իրականացրել ե իր աղատադրման այդ պայմանները։ Անպայման կարելի յե և պետք է ասել։ Իսկ այդ ի՞նչ ե նշանակում։ Այդ նշանակում է, վոր ԽՍՀՄ պրոլետարիատը փոխարկվել ե միանդամայն մի նոր դասակարգի, ԽՍՀՄ բանվոր դասակարգի, վորը վոչնչացրել ե տնտեսության կապիտալիտական սիստեմը, հաստատել ե արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիտական սեփականություն և տանում ե խորհրդացին հասարակությունը կոմունիզմի ուղիղով։

Ինչպես տեսնում եք, ԽՍՀՄ բանվոր դասակարգը—դա մի բոլորովին նոր, շահագործումից աղասադրված բանվոր դասակարգ է, վորի նմանը մարդկության պատմությունը դեռ չի իմացել։

Անցնենք վյուղացիության հարցին։ Սովորաբար ընդունված է ասել, թե վյուղացիությունը—դա մանր արտադրողների մի այնպիսի դասակարգ է, վորի անդամներն ատոմացված են, ցիրուցան յեղած ամբողջ յերկրի յերեսին, անշատաբար փորփոռմ են հետամնաց տեխնիկա ունեցող իրենց մանր տնտեսություններում, մասնավոր սեփականության ստրուկներ են և անպատճ կերպով շահագործվություն են կամածատերերի, կուլակների, վաճառականների, սպեկուլանտների, վաշխառուների կողմից և այլն։ Յեկ իրոք, գյուղացիությունը կապիտալիտական յերկըրներում, յեթե նկատի ունենանք նրա հիմնական մասսան, հենց այդպիսի դասակարգ է հանդիսանում։ Արդյոք կարե-

շի՞ յե ասել, թե մեր արդի գյուղացիությունը, խորհրդացին գյուղացիություն՝ իր մասսայով առած՝ նման է այդպիսի գյուղացիության։ Վո՞չ, այդ չի կարելի ասել։ Այդպիսի գյուղացիություն մեղ մոտ արդեն չկա։ Մեր խորհրդային գյուղացիությունը միանդամայն նոր գյուղացիություն է։ Մեղանում այլևս չկան կարլածատերեր ու կուլիներ, վաճառականներ ու վաշխառուներ, վորոնք կարողացին շահագործում է գյուղացիներին։ Հետեարար, մեր գյուղացիությունը շահագործում է պատապրված գյուղացիությունն է։ Այսուհետեւ, մեր խորհրդային գյուղացիությունն իր ճնշող մեծամասնությամբ կոլտնտեսային գյուղացիություն է, այսինքն՝ նա իր աշխատանքը և իր սուացվածքը հիմնում է վո՞չ թե անհատական աշխատանքի ու հետամնաց տեխնիկայի վրա, այլ կոլեկտիվ աշխատանքի և արդի տեխնիկայի վրա։ Վերջապես, մեր գյուղացիության տնտեսության հիմքում գտնվում է վո՞չ թե մասնավոր սեփականությունը, այլ կոլեկտիվ սեփականությունը, վորն անձեւ է կոլեկտիվ աշխատանքի բազայի վրա։

Ինչպես տեսնում եք, խորհրդային գյուղացիությունը գտա միանգամայն նոր գյուղացիություն է, վորի նմանը գեռ չի իմացել մարդկության պատմությունը։

Անցնենք, վերջապես, ինտելիգենցիայի հարցին, ինժեներութեխնիկական աշխատողների, կուլտուրական ճակատի աշխատողների, ընդհանրապես ծառայողների և այլոց հարցին։ Ինտելիգենցիան նույնպես մեծ փոփոխություններ է կրել անցած ժամանակաշրջանում։ Այդ արդեն այն հին, կոչտապատած ինտելիգենցիան չե, վորը փորձում եր դասակարգերից վեր դասել իրեն, բայց իսկապես՝ իր մասսայով առած՝ ծառայում եր կարլածատերերին ու կապիտալիտաներին։ Մեր խորհրդային ինտելիգենցիան—դա միանգամայն նոր ինտելիգենցիա յե, վորը բոլոր արմատներով կապված է բանվոր դասակարգի ու գյուղացիության հետ։ Փոխիլել ե, նախ, ինտելիգենցիայի կազմը։ Ազնվականությունից ե բուրժուազիայից յելածները կազմում են մեր խորհրդային ինտելիգենցիայի փոքր տոկոսը։ Խորհրդային

ինտելիգենցիայի 80—90 տոկոսը—դա բանվոր դասակարգից, գյուղացիությունից և աշխատավորության այլ շերտերից յեւածներն են։ Փոխվել են, փերջապես, ինտելիգենցիայի դորժունեյության նաև բուն իսկ բնույթը։ Առաջ նաև պետք են ծառայել հարուստ դասակարգերին, վորովհետեւ նրա համար այլ յելք չկար։ Այժմ նա պետք են ծառայի ժողովրդին, վորովհետեւ շահագործող դասակարգերն այլևս չկան։ Յեկանց այլ պատճառով այժմ նա իրավահավասար անդամ է խորհրդային հասարակության, վորտեղ նաև բանվորների ու գյուղացիների հետ մեկտեղ, նրանց հետ միասին լծված, կատարում են նոր անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումը։

Ինչպես տեսնում եք, դա բոլորովին նոր, աշխատավոր ինտելիգենցիայի յեւ, վորի նմանը չեք դանի յերկրագործի վոչ մի յերկրում։

Սրանք են այն վոփոխությունները, վորոնք կատարվել են անցած ժամանակաշրջանում՝ խորհրդային հասարակության դասակարգային կառուցվածքի բնադրավառում։

Ինչի՞ մասին են խոսում այդ վոփոխությունները։

Նախ՝ նրանք ասում են այն, վոր սահմանադերը բանվոր դասակարգի և գյուղացիության միջև, ինչպես և այդ դասակարգերի ու ինտելիգենցիայի միջև, ջնջում են, իսկ դասակարգային հին բացառիկությունն անհետանում են։ Այդ նշանակում են, վոր տարածությունն այդ յերկու սոցիալական խմբերի միջև ավելի ու ավելի կրճատվում են։

Յերկրորդ՝ նրանք ասում են այն, վոր տնտեսական հակասություններն այդ սոցիալական խմբերի միջև՝ ընկում են, ջնջում են։

Վերջապես, նրանք ասում են այն, վոր ընկնում ու ջնջում են նաև քաղաքական հակասությունները նրանց միջև։

Այսպես ե բանը ԽՍՀՄ դասակարգային կառուցվածքի բնադրավառում տեղի ունեցած վոփոխությունների նկատմամբ։

ԽՍՀՄ հասարակական կյանքում կատարված վոփո-

խությունների պատկերը լրիմ չեր լինի, յեթե մի քանի խոսք չասելինք մի բնագավառում ևս կատարված փոփոխությունների մասին։ Յես նկատի ունեմ ազգային փոխարարերությունների բնագավառը ԽՍՀՄ մեջ։ Ինչպես հայտնի յեւ, Խորհրդային Միության մեջ մտնում են մոտ վաղթառն ազգ, ազգային խմբեր ու ժողովուրդներ։ Խորհրդային պետությունը բաղմազդ պետություն ե։ Հասկանալի յեւ, վոր ԽՍՀՄ ժողովուրդների փոխարարերությունների հարցը չի կարող առաջնակարգ նշանակություն չունենալ մեզ համար։

Ինչպես հայտնի յեւ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը կազմվել է 1922 թվականին՝ ԽՍՀՄ Խորհրդադիների Առաջին Համագումարում։ Նա կազմվել է ԽՍՀՄ ժողովուրդների հավասարության ու կամավորության սկզբունքներով։ Այժմ գործող Սահմանադրությունը, վորն ընդունվել էր 1924 թվականին, ԽՍՀՄիության առաջին Սահմանադրությունն ե։ Դա այն ժամանակաշրջանն եր, յերբ հարաբերությունները ժողովուրդների միջև գեռ ինչպես հայտն է չեյին կարգավորման, յերբ վելիկուսուների հանդեպ ցուցաբերվող անվտանգության մնացուկները գեռ չեյին անհետացել, յերբ կենտրոնախույս ուժերը զեռևս շարունակում եյին գործել։ Հարկալոր եր այդ պայմաններում կարգավորել ժողովուրդների յերկարական համագործակցությունը՝ տնտեսական, քաղաքական ու ուսումնական փոխարաձ ողնության հիման վրա, միացնելով նրանց վորպես միութենական բազմազդ պետություն։ Խորհրդային իշխանությունը չեր կարող չտեսնել այդ գործի գերմանական սուսանական պատճենությունների անհաջող փորձերը բուրժուական յերկրներում։ Նա ուներ իր առջև հին Ավստրո-Հունգարիայի տապալված վորձը։ Յեկ, այնուամենայնիվ, նա դիմեց քաղմազդ պետություն ստեղծելու փորձին, վորովհետեւ նա դիմեր, վոր սոցիալիզմի հիմքի վրա առաջացած բազմազդ պետությունը պետությունը պետք են դիմանար բոլոր ու ամեն տեսակ փորձություններին։

Այդ ժամանակից անցել է 14 տարի : Մի ժամանակաշընքն , վորը բավական է փորձն ստուգելու համար : Յնիվ ի՞նչ : Անցած ժամանակաշընքն անտարակուսնիբորեն ցույց տվեց , վոր սոցիալիզմի հիմքի վրա ստեղծված բազմազդ պետություն կազմելու փորձը լիովին հաջողվել է : Դա լենինյան ազգային քաղաքականության անկասկածելի հաղթությունն է : (Յերկարածու ծափակարություններ) :

Ինչո՞վ բացատրել այս հաղթությունը :

Ազգամիջյան կոխների հիմնական կազմակերպիչներ՝ հանդիսացող շահագործող դասակարգերի բացակայությունը . փոխադարձ անվասահություն մշակող և աղքայնական կրքեր բորբոքող շահագործման բացակայությունը . բանվոր դասակարգի իշխանության դլուխ լինելը , մի դասակարգ , վորը հանդիսանում է ամեն տեսակ ստրկացման թշնամի և ինտերնացիոնալիզմի դաշտավարների հայտառիմ կրող . ժողովուրդների փոխադարձ ողնության իրական կենսադարձումը տնտեսական ու հասարակական կյանքի բոլոր առարկաներում . վերջապես , ԽՍՀՄ ժողովուրդների ազգային կուլտուրայի ծաղկումը՝ ազգային ըստ ձեր և սոցիալիստական ըստ բովանդակության , — այս բոլորը և սրանց նման գործոնները՝ հասցըին այն բանին , վոր սրմատապես փոխվեց ԽՍՀՄ ժողովուրդների կերպարանքը , անհետացալ նրանց միջից փոխադարձ անվատահության զդացմունքը , դարձացալ նրանց մեջ փոխադարձ բարեկամության զգացմունքը և այդպիսով՝ կարգավորվեց ժողովուրդների իսկական յեղայրական համագործակցությունը միասնական միութենական պետության սիստեմում :

Իրեւ արդյունք մենք ունենք այժմ միանդամայն կազմակարգած և բոլոր փորձություններին դիմացած բազմազդ սոցիալիստական պետություն , վորի ամրությանը կարող եր նախանձել ամեն մի ազգային պետություն աշխարհի ամեն մի մասում : (Բուռն ծափակարություններ) :

Սրանք են այն փոփոխությունները , վորոնք տեղի յեն

ունեցել ԽՍՀՄ մեջ անցած ժամանակաշընքանում , ազգային փոխադարձությունների ասպարեզում :

Այս և 1924 թվից մինչև 1936 թվին ընկած ժամանակաշընքանում ԽՍՀՄ տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների ընդհանուր հանրագումարը :

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչ արտացոլում են ստացել ԽՍՀՄ կյամքում տեղի ունեցած այդ բոլոր փոփոխությունները նոր Սահմանադրության նախադում:

Այլ կերպ ասած՝ վորո՞նք են այս Համագումարի քննությանը ներկայացված՝ Սահմանադրության նախադի հիմնական առանձնահատկությունները:

Սահմանադրական Հանձնաժողովին հանձնարարված եր փոփոխություններ մտցնել 1924 թվականի Սահմանադրության տեքստում: Վորպես Սահմանադրական Հանձնաժողովի աշխատանքի արդյունք ստացվեց Սահմանադրության զույթ նոր Սահմանադրության նախադիթը: Նոր տեքստ, ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախադիթը: Սահմանադրատան Հանձնաժողովը, նոր Սահմանադրության նախադիթը կազմելիս, յելակետ ե ունեցել այն, վոր Ռահմանադրությունը չպետք ե շփոթել ծրագրի հետ: Այդ Ռահմանադրությունը չպետք ե շփոթել ծրագրի հետ և այլ համար նախադիթը ու սահմանադրության միջև նշանակում ե, վոր ծրագրի ու սահմանադրության միջև այս բանի մասին, ինչը դեռ չկա և ինչը դեռ պետք ե այն բանի մասին, ինչը դեռ չկա և ինչը դեռ պետք ե այս բանի մասին, ինչը վոր արդեն ձեռք ե բերված ու նվաճված ե արդեն կա, ինչ վոր արդեն ձեռք ե բերված ու նվաճված ե այժմ, ներկայումս: Ծրագրը վերաբերում ե գլխավորապես, պետք ե խոսի այն բանի մասին, ինչ վոր ընդհակառակը, պետք ե խոսի այն բանի մասին, սահմանադրությունը՝ ներկային:

Երկու որինակ՝ լուսաբանության համար:

Մեր խորհրդային հասարակությունը հասավ այն բանին, վոր նա արդեն հիմնականում իրականացրեց սոցիալգոմը, սուեղծեց սոցիալիստական հասարակակարգ, այսինքն՝ իրականացրեց այն, ինչ վոր մարգսիստների մոտ այլ կերպ կոչվում է կոմունիզմի առաջին կամ սոորին վուլ: Նշանակում ե՝ մեզ մոտ արդեն հիմնականում իրականացված ե կոմունիզմի առաջին վուլ՝ սոցիալիզմը: (Յերկարածու ծափահարություններ): Կոմունիզմի այդ վուլը հիմնական սկզբունքն ե, ինչպես հայտնի յե, հետեւյալ Փորմուլան. «յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի»: Արդյոք մեր Սահմանադրությունը պե՞տք ե արտացոլի այդ վաստը, սոցիալիզմի նվաճման վաստը: Նա պե՞տք ե արդյոք հիմնվի այդ նվաճման վրա: Անպայման պետք ե հիմնըվի: Պետք ե, վորովհետեւ սոցիալիզմը ԽՍՀՄ համար այն ե, ինչ վոր արդեն ձեռք ե բերվել և նվաճվել:

Բայց խորհրդային հասարակությունը դեռ չի հասել կոմունիզմի բարձրագույն վուլի իրականացմանը, վորտեղ տիրապետող սկզբունքն ե լինելու հետեւյալ Փորմուլան. «յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա սղահանջմունքների», թեպետև նա իր առջև նապատակ ե գրել հասնել արագայում կոմունիզմի բարձրագույն վուլի իրականացմանը: Կարո՞ղ ե արդյոք մեր Սահմանադրությունը հիմնվել կոմունիզմի բարձրագույն վրա, վորը դեռ չկա և վորը դեռ պետք ե նվաճվի: Վո՞չ, չի կարող, վորովհետեւ կոմունիզմի բարձրագույն վուլը ԽՍՀՄ համար այն ե, ինչ վոր դեռ չի իրականացված և ինչ վոր պետք ե իրականացվի ապագայում: Զի կարող, յեթե նա չի ուզում ապագա նվաճումների ծրագրի կամ դեկլարացիայի վերածվել:

Սրանք են մեր Սահմանադրության շրջանակները տվյալ պատմական մոմենտում:

Այդպիսով, նոր Սահմանադրության նախադիթը ներկայացնում ե անցած ուղղու արդյունքը, արդեն ձեռք բերված նվաճումների արդյունքը: Հետևաբար, նա հանդիսանում է

գրանցումն ու որենսդրական ամբազնդումն այն բանի, ինչ
վոր արդեն ձեռք է բերված ու նվաճված իրականում:
(Բուռն ծափահարություններ):

Այս և ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախագծի առաջին առանձնահատկությունը:

Այնուհետեւ: Բուրժուական յերկրների սահմանադրությունները սովորաբար յելնում են կապիտալիստական հասարակակարգի անսասան լինելու համոզունքից: Այդ սահմանադրությունը այդի գլխավոր հիմքն էն կազմում կապիտալիզմի սկզբունքները, նրա գլխավոր հիմունքները—հողի, անտառի, Փաբրիկաների, դոլիճարանների և արտադրության այլ գործիքների ու միջոցների մասնավոր սեփականությունը. մարդու շահագործումը մարդու կողմից և շահագործողների ու շահագործվողների առկայությունը. աշխատավոր մեծամասնության ապահովված չլինելը հասարակության մեկ բներում և չաշխատող, բայց ապահովված փոքրամասնության ճոխությունը մյուս բներում և այլն և այլն: Նրանք հենվում են կապիտալիզմի այս և սրանց նման հիմունքների վրա: Նրանք արտացոլում են այս ամենը, նրանք որենսդրական կարգով ամբազնդում են այս ամենը:

Ի տարբերություն դրանցից՝ ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախագիծը յելնում ե կապիտալիստական կարգերի վերացման փաստից, ԽՍՀՄ մեջ սոցիալիստական կարգերի հաղթության փաստից: ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախագծի գլխավոր հիմունքները, վորոնք արդեն նվաճված ե իրականացված են—հողի, անտառի, Փաբրիկաների, գործարանների և արտադրության այլ գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը. շահագործման ու շահագործող դասակարգերի վերացումը. մեծամասնության աղքատության և փոքրամասնության ճոխության վերացումը. աշխատանքը՝ վորպես յուրաքանչյուր աշխատունակ քաղաքացու պարտականությունը և պատվի պարտք՝ «ով չի աշ-

խատում, նա չի ուտում» Փորմուլայի համաձայն: Աշխատանքի իրավունքը, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու մերաբերյալ յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը, հանգստի իրավունքը, կրթության իրավունքը և այլն և այլն: Նոր Սահմանադրության նախագիծը հենվում է սոցիալիզմի այս և սրանց նման հիմունքների, վրա: Նա արտացոլում է այդ հիմունքները, նա որենսդրական կարգով ամբազնդում է դրանք:

Այս և նոր Սահմանադրության նախագծի յերկրորդ առանձնահատկությունը:

Այնուհետեւ: Բուրժուական սահմանադրությունները լույսայն յելնում են այն նախագրյալից, վոր հասարակությունը բաղկացած է հակամարտ դասակարգերից, հարըստության տեր դասակարգերից և հաբատություն չունեցող դասակարգերից, վոր ինչ կուսակցություն ել իշխանության գլուխ անցնի, հասարակության պետական ղեկավարություն (դիկտատորան) պետք ե պատկանի բուրժուազիային, վոր սահմանադրությունը հարկավոր և ունեու դասակարգերին հաճելի ու ձեռնտու հասարակական կարգերն ամբազնդելու համար:

Ի տարբերություն բուրժուական սահմանադրություններից՝ ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախագիծը յելնում ե այն բանից, վոր հասարակության մեջ այլևս հակամարտ դասակարգեր չկան, վոր հասարակությունը բաղկացած է յերկու միմյանց բարեկամ դասակարգերից՝ բանվորներից ու գյուղացիներից, վոր իշխանության գլուխ են կանգնած հենց այդ աշխատավորական դասակարգերը, վոր հասարակության պետականում ե բանվոր դասակարգին՝ վորպես հասարակության առաջավոր դասակարգի, վոր սահմանադրությունը հարկավոր և նրա համար, վորպես վի ամբազնդենք աշխատավորությանը ցանկալի և ձեռնտու հասարակական կարգերը:

Այս և նոր Սահմանադրության նախագծի յերկրորդ առանձնահատկությունը:

Այսուհետեւ : Բուրժուական սահմանադրությունները լուելիք յելնում են այն նախադրյալից, վոր ազգերը և ուսաները չեն կարող իրավահամասար լինել, վոր կան լիերավ ազգեր և վոչ-լիերավ ազգեր, վոր, բացի դրանից, գոյություն ունի ազգերի կամ ուսաների նաև յերրորդ կատեղորիս, որինակ, գաղութներում, վորոնք ունեն եղալ աշելի պակաս իրավունքներ, քան վոչ-լիերավ ազգերը : Այս նշանակում ե, վոր այդ բոլոր սահմանադրություններն իրենց հիմքում նացիոնալիստական են, այսինքն՝ տիրապետող ազգերի սահմանադրություններ են :

Ի տարբերություն այդ սահմանադրություններից՝ ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախադիմք, ընդհակառակը, խորապես ինտերնացիոնալ ե : Նա յելնում ե այն բանից, վոր բոլոր ազգերն ու ուսաներն իրավահամասար են: Նա յելնում ե այն բանից, վոր տարբերությունը մորթի գույնի կամ լեզվի, կուլտուրական մակարդակի կամ պետական զարդարման մակարդակի միջև, ինչպես նաև վորեւ այլ տարբերություն ազգերի և ուսաների միջև—չի կարող հիմք ծառայել այն բանի համար, վորպեսզի արդարացվի ազգային անիրավահամասարությունը: Նա յելնում ե այն բանից, վոր բոլոր ազգերն ու ուսաները, անկախ նրանց անցյալ և ներկա դրությունից, անկախ նրանց ուժից ու թուլությունից,—պետք ե ոգտվեն միատեսակ իրավունքներով հասարակության տնտեսական, հասարակական, սիրտական ու կուլտուրական կյանքի բոլոր վոլորտներում :

Այս ե նոր Սահմանադրության նախադի չորրորդ առանձնահատկությունը :

Նոր Սահմանադրության նախադի հինգերորդ առանձնահատկությունը նրա հետեղական և մինչև վերջը պահպանված դեմոկրատիզմն ե : Դեմոկրատիզմի տեսակետից բուրժուական սահմանադրությունները կարելի յե յերկու խմբի բաժանել. սահմանադրությունների մի խումբն ուղղակի ժխտում ե կամ փաստորեն վոչնչի յե վերածում քաղաքացիների իրավունքների հավասարությունը և դեմոկրատական աղատությունները : Սահմանադրությունների մյուս

խումբը սիրով ընկունում ե և մինչև անդամ ցուցադրում և դեմոկրատական սկզբունքները, բայց միաժամանակ այնպիսի վերապահումներ ու սահմանակալումներ ե անում, վոր դեմոկրատական իրավունքներն ու ազատությունները բոլորովին խեղաթյուրված են գուրս գալիս: Նրանք խոսում են հավասար ընտրական իրավունքների մասին բոլոր քաղաքացիների համար, բայց տեղուտեղը սահմանակալում են դրանք նստակեցությամբ և կրթական ու նույնիսկ գույքային ցեղազով: Նրանք խոսում են քաղաքացիների հավասար սար իրավունքների մասին, բայց տեղուտեղը վերապահում է մասամբ: Յեվ այլն և այլն :

ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախադի առանձնահատկությունն այն ե, վոր նա ազատ ե այդպիսի վերապահումներից ու սահմանակալումներից: Նրա համար գոյություն չունեն ակտիվ կամ պասսիվ քաղաքացիներ, նրա համար բոլոր քաղաքացիներն ակտիվ են: Նա տարբերություն չի ընդունում տղամարդկանց ու կանանց, «նստակյացների» ու «վոչ-նստակյացների», ունեորների ու չունեորների, կրթվածների ու վոչ-կրթվածների իրավունքների միջև: Նրա համար բոլոր քաղաքացիներն իրենց իրավունքներով հավասար են: Վո՛չ թե գույքային դրությունը, վո՛չ թե ազգային ծագումը, վո՛չ թե սեռը, վո՛չ թե պաշտոնեյական դրությունը, այլ յուրաքանչյուր քաղաքացու անձնական ընդունակություններն ու անձնական աշխատանքներն են վորոշում նրա դրությունը հասարակության մեջ:

Վերջապես, նոր Սահմանադրության նախադի մի առանձնահատկություն ես: Բուրժուական սահմանադրությունները սովորաբար սահմանակալվում են քաղաքացիների ձևական իրավունքների Փիքսացիայով, չհոգալով այդիրավունքների կենտրոնացման պայմանների մասին, նրանց կենսագործման հնարավորության մասին, նրանց կենսագործման միջոցների մասին: Խոսում են քաղաքացիների հավասարության մասին, բայց մոռանում են, վոր չի կարող իսկական հավասարություն լինել տիրոջ ու բանվորի

միջն, կալվածատիրոջ ու գյուղացու միջն, յեթե առաջին-ներն ունեն հարստություն և քաղաքական կշիռ հասարա-կության մեջ, իսկ յերկրորդները զրկված են թե՛ մեկից և թե՛ մյուսից, յեթե առաջինները շահագործողներ են, իսկ յերկրորդները՝ շահագործվողներ։ Կամ դարձյալ. խոսում են խոսքի, ժողովների և մամուլի ազատության մասին, բայց մոռանում են, վոր այդ բոլոր ազատությունները կա-րող են բանվոր դասակարգի համար դատարկ հնչյունի վե-րածվել, յեթե նա զրկված է իր տրամադրության տակ ժո-ղովների համար հարմար չենքեր, լավ ապարաններ, տպա-դրական թղթի բավականաչափ քանակություն և այլն ունե-նալու հնարավորությունից։

Նոր Սահմանադրության նախադիր առանձնահատկու-թյունն այն է, վոր նա չի սահմանափակվում քաղաքացի-ների ձեւական իրավունքների Փիքսացիայով, այլ ծանրու-թյան կենտրոնը փոխադրում է այդ իրավունքներն ապահո-վելու հարցի վրա, այդ իրավունքներն իրականացնելու մի-ջոցների վրա։ Նա վո՞չ թե սոսկ հռչակում է քաղաքացի-ների իրավունքների հավասարությունը, այլև ապահովում է այն՝ որենսդրական կարգով հաստատելով շահագործման ուժիմի վերացման փաստը, քաղաքացիների ամեն մի շա-հագործումից ազատագրվելու փաստը։ Նա վո՞չ թե սոսկ հռչակում է աշխատանքի իրավունք, այլև ասկահովում է այն՝ որենսդրական կարգով հաստատելով ճգնաժամերի բա-ցակայության փաստը խորհրդային հասարակության մեջ, դորձարկության վոչնչացման փաստը։ Նա վո՞չ թե սոսկ հռչակում է գեմոկրատական ազատություններ, այլև գրանք որենսդրական կարգով ապահովում է նյութական վորոշ մի-ջոցներով։ Ուստի հասկանալի յե, վոր նոր Սահմանադրու-թյան նախադիր գեմոկրատիզմը վո՞չ թե «սովորական» և «հանրաճանաչ» գեմոկրատիզմ ենոդանրապես, այլ սոցիա-լիստական գեմոկրատիզմ։

Արանք են ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախադիր հիմնական առանձնահատկությունները։

Այսպես են արտացոլված նոր Սահմանադրության նա-խադում ԽՍՀՄ տնտեսական ու հասարակական-քաղա-քական կյանքում տեղի ունեցած այն տեղաշարժերն ու ո-փոխությունները, վորոնք իրականացվեցին 1924 թվա-մինչև 1936 թիվն ընկած ժամանակաշրջանում։

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԲՈՒԺՈՒԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մի քանի խոսք Սահմանադրության նախագծի բուժուական քննադատության մասին:

Այն հարցը, թե ի՞նչպես ե վերաբերվում ոտարերկրյա բուժուական մամուլը Սահմանադրության նախագծին, անվիճելիորեն վորոշ հետաքրքրություն և ներկայացնում: Քանի վոր ոտարերկրյա մամուլն արտացոլում է բուժուական յերկրության բնակչության զանազան խավերի հասարակական կարծիքը, մենք չենք կարող անցնել այն քննադատության կողքով, վոր ծավալեց այդ մամուլը Սահմանադրության նախագծի գեմ:

Սահմանադրության նախագծի նկատմամբ ոտարերկրյա մամուլի ցույց տված վերաբերմունքի առաջին նշաններն արտահայտվեցին վորոշ տեհնդենցով—լուռության՝ մատնել Սահմանադրության նախագիծը: Տվյալ դեպքում յես նկատի ունեմ ամենառեալիցին, Փաշխտական մամուլը: Քննադատուերի այդ խումբն՝ ամենից լավ համարեց պարզապես լուռության մատնել Սահմանադրության նախագիծը, գործը պատկերացնել այնպես, թե կարծես նախագիծը չի յեղել և ընդհանրապես այն չկա բնության մեջ: Կարող են ասել, թե լուռության մատնելը քննադատություն չե: Բայց դա ճիշտ չե: Լուռության մատնելու մեթոդը, վորպես անտեսելու հատուկ յեղանակ, նույնպես քննադատության մի ձև է, ճիշտ ե՝ հիմար ու ծիծաղելի, բայց և այնպես քննադատության ձև: (Ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ):

Սակայն լուռության մատնելու նրանց մեթոդից բան դուրս չեկալ: Վերջիվերջո նրանք հարկադրված յեղան բանալ փակիչը և աշխարհին հաղորդել, թե, վորքան ել այդ ցավալի լինի, այնուամենայնիվ ԽՍՀՄ Սահմանադրության նախագիծը գոյություն ունի, և վո'չ միայն գոյություն ունի, այլև սկսում ե վնասակար ազգեցություն դործել մըսքերի վրա: Այլ կերպ չեր ել կարող լինել, վորովհետեւ աշխարհիս յերեսին այնուամենայնիվ կա մի ինչ-վոր հասարակական կարծիք, ընթերցողներ, կենդանի մարդերի, վորոնք ուզում են ճշմարտությունն իմանալ փաստերի մասին և վոչ մի հնարավորություն չկա յերկար ժամանակ խարեցայության մամլիկի տակ պահել նրանց: Խարեբայությամբ հեռու չես գնա...»

Քննադատների ցերկուրդ խումբն ընդունում է, վոր Սահմանադրության նախագիծն իրոք գոյություն ունի բնության մեջ, բայց նա գտնում է, վոր նախագիծը մեծ հետաքրքրություն չի ներկայացնում, վորովհետեւ նա ըստ եյության վո'չ թե սահմանադրության նախագիծ է, այլ դատարկ թղթի կտոր, դատարկ խոստում, վորը նպատակ ունի վորոշ մանյուլը անել և մարդկանց խարել: Հստվորում նրանք ավելացնում են, վոր ԽՍՀՄ ավելի լավ նախագիծ չեր ել կարող տալ, վորովհետեւ ԽՍՀՄ ինքը վո'չ թե պետություն է, այլ ընդամենն աշխարհագրական հասկացողություն (ընդհանուր ծիծաղ), իսկ քանի վոր նա պետություն չի հանդիսանում, ապա նրա սահմանադրությունն ել չի կարող իսկական սահմանադրություն լինել: Քննադատների այս խմբիկ ներկայացուցիչ և հանդիսանում, վորքան ել այդ տարրության լինի, գերմանական օֆիցիոդ «Դոյչե Դիվլումատլը-Պոլիտիչե Կորրեսպոնդենցը»: Այդ ժուռնալն ուղղակի ասում է, թե ԽՍՀՄ Սահմանադրության նախագիծը դատարկ խոստում է, խարեյություն, «պոտյումկինյան դյուլը»: Նա առանց տատանվելու հայտարարում է, վոր ԽՍՀՄ պետություն չի հանդիսանում, վոր ԽՍՀՄ «ներկայացնում է վոչ այլ ինչ, բայց յեթե ճշգրիտ կերպով վորոշվող աշխարհագրական հասկացողությունն»

(ընդհանուր ծիծաղ), վոր ԽՍՀՄ Սահմանադրությունը, այդ պատճառով, չի կարող իսկական սահմանադրություն հանաչվել:

Ի՞նչ կարելի յե ասել այդպիսի, թող ներվի ասել, քննադատների մասին:

Իր հեքիաժ-պատմվածքներից մեկի մեջ ոռւսական մեծ գրող Շչեդրինը տալիս է շատ սահմանափակ ու բթամիտ, բայց չափազանց ինքնավտահ և տաքարյուն բյուրոկրատ սամողուր մարդու տիսլը: Այն բանից հետո, յերբ այդ բյուրոկրատն իրեն «վաստահացած» մարդում «կարգ ու անդորրություն» հաստատեց, բնաջինջ անելով հազարավոր բնակիչների և հրկիղելով տասնյակ քաղաքներ, նա նայեց իր շուրջը և հորիզոնի վրա նկատեց Ամերիկան, մի յերկիր, վորն, իհարկե, քիչ և հայտնի, վորտեղ, բանից դուրս ե գալիս, վոր կան ժողովրդին չփոխեցնող ինչ-վոր ազատություններ և վորտեղ պետությունն ուրիշ մեթոդներով են կառավարում: Բյուրոկրատը նկատեց Ամերիկան և վրդովկեց. այդ ի՞նչ յերկիր ե, վո՞րտեղից լույս ընկալ այն, այդ ի՞նչ հիման վրա յե, վոր գոյություն ունի այն: (Ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ): Իհարկե, այդ յերկիրը պատահաբար հայտնագործել եյին մի քանի դար՝ առաջ, բայց միթե չի կարելի այն նորից ծածկել, վորպեսզի նրա հոտն անդամ չմնա: (Ընդհանուր ծիծաղ): Յեվ այս ասելով՝ մակարեց. «Նորից ծածկել Ամերիկան»: (Ընդհանուր ծիծաղ):

Ինձ թվում ե, վոր «Դոյչե Դիպլոմատիշ-Պոլիտիշ Կորպորացոնենցի» պարոնները, ինչպես ջրի յերկու կաթիլ, նման են Շչեդրինի բյուրոկրատին: (Ընդհանուր ծիծաղ, հայլանության ծափահարություններ): ԽՍՀՄ վաղուց և այդ պարոնների աշխի վուշը դարձել: 19 տարի կանգնած ե ԽՍՀՄ իրեն մի փարոս, աղատադրության շնչով վարակելով ամբողջ աշխարհի բանիոր դատակարդին և կատաղություն առաջացնելով բանիոր դատակարդի թշնամիների մեջ: Յեվ նա, այդ ԽՍՀՄ, բանից դուրս ե գալիս, վո՞չ միայն պարզապես գոյություն ունի, այլ նույնիսկ ածում ե, և վո՞չ միայն ածում ե, այլ նույնիսկ բարդավաճում ե, և վո՞չ միայն

բարդավաճում ե, այլ նույնիսկ հորինում և նոր Սահմանադրության նախագիծ, մի նախագիծ, վորը մտքեր և դրգուում, նոր հույսեր և ներշնչում մնշված դասակարգերին: (Ծափահարություններ): Սրանից հետո ել ի՞նչպես չվրդովկեն գերմանական օֆիցիողի պարոնները: Այդ ի՞նչ յերկիր ե, վայնասուն են բարձրացնում նրանք. այդ ի՞նչ հիման վրա յե, վոր գոյություն ունի այն (Ընդհանուր ծիծաղ), և յեթե այն հայտնագործել են 1917 թվի հոկտեմբերին, ապա ինչո՞ւ չի կարելի այն նորից ծածկել, վորպեսզի նրա հոտն անդամ չմնա: Յեվ այս ասելով վորոշեցին—նորից ծածկել ԽՍՀՄ, հայտարարել ի լուր ամենքի, վոր ԽՍՀՄ վորպես պետություն, գոյություն չունի, վոր ԽՍՀՄ վոչ այլ ինչ ե, յեթե վոչ հասարակ աշխարհադրական հասկացողություն: (Ընդհանուր ծիծաղ):

Մակադրություն անելով, վորպեսզի նորից ծածկել Ամերիկան, չենդրինյան բյուրոկրատը, չնայելով իր ամբողջ բժամտությանը, այնուամենայնիվ գտավ իր մեջ իրականությունն ըմբռնելու տարրեր, տեղնուտեղն ասելով ինքն իրեն. «Բայց, կարծես թե, սույն այս բանն ինձնից չի կախված»: (Ուրախ ծիծաղի պոռքիում, բուռն ծափահարություններ): Յես չգիտեմ, գերմանական օֆիցիողի պարոնների խելքը կհասնի՞ արդյոք գլխի ընկնելու, վոր թղթի վրա այս կամ այն պետությունը «ծածկել» նրանք, իհարկե, կարող են, բայց, յեթե լրջորեն խոսենք, ապա «սույն այս բանը նրանցից չի կախված»... (Ուրախ ծիծաղի պոռքիում, բուռն ծափահարություններ):

Ինչ վերաբերում ե այն բանին, վոր ԽՍՀՄ Սահմանադրությունն իբր թե հանդիսանում ե դատարկ խոստում, «պոտյումկինյան դյուղ» և այլն, ապա յես կուզեյի վկայակոչել մի շարք հաստատված փաստեր, վորոնք իրենք են խոսում իրենց մասին:

1917 թվին ԽՍՀՄ ժողովուրդները տապալեցին բուրժուադիային և հաստատեցին պրոլետարիատի դիկտատուրա, հաստատեցին Խորհրդային իշխանություն: Սա իմաստ ե և վոչ թե խոստում:

Ապա, Խորհրդային իշխանությունը վերացրեց կալվածատերերի դասակարգը և նախկին կալվածատիրական, պետական ու վանքապատկան ավելի քան 150 միլիոն հեկտար հող հանձնեց գյուղացիներին, և այս—բացի այն հողերից, վոր առաջներումն ել գյուղացիների ձեռքումն ելին դաշնություն։ Սա փաստ է և վոչ թե խոստում։

Ապա, Խորհրդային իշխանությունն եքսպրոսոլրիացիայի յենթարկեց կապիտալիստաների դասակարգը, խլեց նրանցից բանկերը, գործարանները, յերկաթուղիները և արտադրության այլ գործիքներն ու միջոցները, դրանք սոցիալիստական սեփականություն հայտարարեց և այդ ձեռնարկությունների գլուխ կանգնեցրեց բանվոր դասակարգի լավագույն մարդկանց։ Սա փաստ է և վոչ թե խոստում։ (Յերկարած ծափահարություններ)։

Ապա, նոր սոցիալիստական հիմունքների վրա, նոր տեխնիկական բազայով կաղմակերպելով արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը՝ Խորհրդային իշխանությունը հասալ այն բանին, վոր ներկայումս ԽՍՀՄ հողագործությունը մեկ և կես անդամ ավելի արտադրանք է տալիս, քան նախապատերազմյան ժամանակ, ինդուստրիան տալիս և յոթն անդամ ավելի արտադրանք, քան նախապատերազմյան ժամանակ, իսկ ժողովրդական յեկամուտն աճել և չորս անդամ՝ համեմատած նախապատերազմյան ժամանակի հետ։ Այս բոլորը փաստեր են և վոչ թե խոստումներ։ (Յերկարած ծափահարություններ)։

Ապա, Խորհրդային իշխանությունը վոչնչացրեց գործադրությունը, կիրառեց կյանքում աշխատանքի իրավունքը, հանդսոտի իրավունքը, կրթության իրավունքը, բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի համար ապահովեց լավագույն նյութական և կուլտուրական պայմաններ, ապահովեց ընդհանուր, ուղղակի և համասար ընտրական իրավունքի կենսագործումը՝ քաղաքացիների գաղտնի քվեարկության պայմաններում։ Այս բոլորը փաստեր են և վոչ թե խոստումներ։ (Յերկարած ծափահարություններ)։

Վերջապես, ԽՍՀՄ տվեց նոր Սահմանադրության նախադիմ, վոր վո՛չ թե խոստում է, այլ այդ հանրածանոթ փաստերի գյանցում և որենսդրական ամրապնդում, գյանցումն ու որենսդրական ամրապնդումն այն բանի, ինչ վոր արդեն ձեռք է բերված ու նվաճված։

Հարց և ծագում. այս ամենից հետո ինչի յէ հանդում պերմանական ովիցիողի պարոնների շաղակրատությունը «պոտյումիլինյան գյուղերի» մասին, յեթե վոչ այն բանին, վոր նրանք նպատակ են գրել թագանելու ժողովրդից ճշմարտությունը ԽՍՀ Միության մասին, մոլորեցնելու ժողովրդին, խարելու նրան։

Սրանք են փաստերը։ Իսկ փաստերը, ինչպես ասում են, համառ բան են։ Գերմանական ովիցիողի պարոնները կարող են ասել՝ ավելի՛ վատ փաստերի համար։ (Ընդհանուր ծիծաղ)։ Բայց այն ժամանակ կարելի յէ պատասխանել ուղարկած հայտնի ասացվածքի այս խոսքերով՝ «Հիմարների համար որենք չկա»։ (Ուրախ ծիծաղ, յերկարած ծափահարություններ)։

Քննադատաների յերրորդ խումբը հակառակ չէ ընդունելու Սահմանադրության նախադիմ վորոշ արժանիքները, նա դրական յերկություն և համարում այդ նախադիմը, բայց այդ խումբը՝ արի ու տես, վոր շատ և կասկածում, թե կարելի կլինի՞ արդյոք այդ Սահմանադրության մի շարք գյուղթյունները կենսագործել, վորովհետեւ նա համոզված է, վոր այդ գրույթներն ընդհանրապես մնի ուղղործելի յեն և պետք է մնան թղթի վրա։ Արանք, մեղմ ասած, սկեպտիկներ են։ Դրանք, այդ սկեպտիկները, գյուղթյուն ունեն բոլոր յերկրներում։

Պետք է ասել, վոր մենք գրանց առաջին անդամը չե, վոր հանդիպում ենք։ Յերբ բոլշևիկները 1917 թ. վերցնում ելին իշխանությունը, սկեպտիկներն ասում ելին։ բոլշևիկները, թերեւս, վատ մարդիկ չեն, բայց իշխանության գործը նրանց մոտ առաջ չի դնա, նրանք կտապալվեն։ Սակայն իրականում գուրս յեկավ, վոր տապալվեցին վո՛չ թե բոլշևիկները, այլ սկեպտիկները։

Քաղաքացիական պատերազմի և ոտարերկրյա ինտերվենցիայի ժամանակ սկեպտիկների այդ խումբն ասում եր. Խորհրդային իշխանությունն, իհարկե, վատ բան չե, բայց Դենիկինը կոլչակի հետ մեկտեղ, պլյուս ոտարերկրացիները, թերեւս կհաղթահարեն նրան: Սակայն, իրականում դուրս յեկավ, վոր սկեպտիկներն այստեղ ել սխալվեցին իրենց հաշիվներում:

Յերբ Խորհրդային իշխանությունը հրապարակեց առաջն հնդամյա պլանը, սկեպտիկները նորից ասպարեզ յեկան, ասելով. հնդամյակը, իհարկե, լավ բան ե, բայց նա հազիվ թե իրագործելի լինի. պետք ե յենթագրել, վոր բոլշևիկների մոտ հնդամյակի գործը գլուխ չի դա: Սակայն, փառերը ցույց տվին, վոր սկեպտիկների բախտը նորից չբացեց—հնդամյա պլանն իրագործվեց չորս տարում:

Նույն բանը պետք ե ասել նոր Սահմանադրության նախագծի և սկեպտիկների կողմից այդ Սահմանադրության քննադատության մասին: Բայլական եր հրապարակել նախագիծը, վորպեսզի քննադատների այդ խումբը նորից բեմ դուրս դար իր տաղտկալի սկեպտիսով, Սահմանադրության մի քանի գրույթների իրագործելիության վերաբերյալ իր կասկածներով: Վոչ մի հիմք չկա կասկածելու այն մասին, վոր սկեպտիկները կտապալվեն նաև տվյալ դեպքում, կտապալվեն այժմ նույնպես, ինչպես քանիցս տապալվել են անցյալում:

Քննադատների չորրորդ խումբը, գրոհելով նոր Սահմանադրության նախագծի վրա, ընութագրում ե այն վորպես «տեղաշարժ դեպի աջ», վորպես «Հրաժարումն պրոլետարիատի դիկտատորայից», վորպես «բոլշևիկյան ուժիմի վերացում»: «Բոլշևիկները դեպի աջ ճոճվեցին, այդ փաստե»—ասում են նրանք զանազան ձայներով: Այդ տեսակետից առանձնապես ջանք են գործ դնում մի քանի լեհական և մասամբ ամերիկյան թերթեր:

Ի՞նչ կարելի յե ասել այդ, թող ներվի ասել, քննադատների մասին:

Յեթե բանլոր դատակարգի դիկտատորայի բաղայի ըն-

դարձակումը և դիկտատորայի վերածումը հասարակության պետական ղեկավարման ավելի ձկուն, հետեւաբար՝ ավել չզոր սիստեմի՝ մեկնաբանվում ե նրանց կողմից վոչ վորպես բանվոր դատակարգի դիկտատորայի ուժեղացում, այլ վորպես նրա թուլացում կամ նույնիսկ վորպես հրաժարումն վորպես նրանց, ապա թույլատրելի յե հարցնել. իսկ ընդհանրապես դիտե՞ն արդյոք այդ պարոնները, թե ինչ բան ե բան-վոր դատակարգի դիկտատորան:

Յեթե սոցիալիզմի հաղթության որենսդրական ամրապնդումը, ինդուստրացման, կուեկտիվացման ու դեմոկրատացման հաջողությունների որենսդրական ամրապնդումը նրանց մոտ կոչվում ե «տեղաշարժ դեպի աջ», ապա թույլատրելի յե հարցնել. իսկ ընդհանրապես դիտե՞ն արդյոք այդ պարոնները, թե ինչով ե տարբերվում ձախն աջից: (Ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ):

Տարակույս չի կարող լինել, վոր այդ պարոնները վերջնականապես խճանվել են Սահմանադրության նախագծի իրենց քննադատության մեջ և խճանվելով՝ չփոթել են աջը ձախն հետ:

Այդ առթիվ չի կարելի չի տեսել ճորտ տնային «աղջիկ» Պելագեյային—Գոգոլի. «Մեռյալ հոգիներից»: Նա, ինչպես պատմում ե Գոգոլը, հանձն առավ մի անդամ հանապարհ ցույց տալ Զիչիկովի կառապան Սելֆֆանին, բայց չկարուցույց և անհարմար զլության մեջ ընկավ: Պետք մից, չփոթել և անհարմար զլության մեջ ընկավ: Պետք ե ընդունել, վոր մեր քննադատները լեհական թերթերից, և չնայած նրանց ամբողջ ամբիցիային, այնուամենայնիվ հետայի ուռ չեն գնացել «Մեռյալ հոգիների» ճորտ տնային «աղջիկ» Պելագեյայի հանկացողության մակարդակից: (Ծափահարություններ): Յեթե կհիշեք, կառապան Սելֆֆանը հարկադիր կոր համարեց շշպրել Պելագեյային՝ աջը ձախի հետ շփոթելու համար, ասելով նրան. «Եյ, դու, սեատոտիկ... չկիտես, թե վորտեղ ե աջը, վորտեղ՝ ձախը»: Յես կարծում եմ, վոր հարկավոր եր հենց այդպես ել շշպրել մեր ձախողակ քննադատներին, ասելով նրանց. Եյ, դուք, վա՛յ-քննա-

դատներ... չգիտեք, թե վորտեղ ե աջը, վորտեղ՝ ձախը:
(Յերկարան ծափահարություններ):

Վերջապես, քննադատների մի խումբ ևս: Յեթե նախորդ
խումբը Սահմանադրության նախագիծը մեղադրում ե բան-
վոր գասակարգի դիկտատուրայից հրաժարվելու համար, ա-
պա այս խումբը մեղադրում ե նրան, ընդհակառակը, այն
բանի համար, վոր նա վոչինչ չի փոխում ԽՍՀՄ մեջ դոյու-
թյուն ունեցող դրության մեջ, վոր նա չենք չի տալիս բան-
վոր գասակարգի դիկտատուրային, թույլ չի տալիս քաղա-
քական կուսակցությունների ազատություն և ուժի մեջ և
պահում կոմունիստների կուսակցության ներկա ղեկավար
գերքը ԽՍՀՄ մեջ: Ընդունին քննադատների այդ խումբը
գտնում ե, վոր ԽՍՀՄ մեջ կուսակցությունների ազատու-
թյան բացակայությունը գեմոկրատիզմի հիմքերի խախտ-
ման նշան է:

Յես սկսոք և խոստվանեմ, վոր նոր Սահմանադրու-
թյան նախագիծն իրոք ուժի մեջ և պահում բանվոր դասա-
կարգի դիկտատուրայի ռեժիմը, ինչպես նաև անիտիվիսի և
թողնում կոմունիստական կուսակցության ներկա ղեկավար
գերքը ԽՍՀՄ մեջ: (Բուռն ծափահարություններ): Յեթէ
հարգելի քննադատները դա Սահմանադրության նախադի
թերությունն են համարում, ապա կարելի յե միայն ափառ-
ուալ այդ մասին: Իսկ մենք, բոլշևիկներս, դա համարում
ենք Սահմանադրության նախադի արժանիքը: (Բուռն ծա-
փահարություններ):

Ինչ վերաբերում ե տարբեր քաղաքական կուսակցու-
թյունների ազատությանը, ապա այստեղ մենք մի քիչ այլ
հայացքներ ենք պաշտպանում: Կուսակցությունը դասա-
կարգի մի մասն է, նրա առաջավոր մասը: Մի քանի կու-
սակցություններ, նշանակում ե՝ նաև կուսակցությունների
ազատություն, կարող են գոյություն ունենալ միմիայն այն-
պիսի հասարակության մեջ, վորտեղ կան հակամարտ դա-
սակարգեր, վորոնց շահերը թշնամական են ու անհաշտ,
վորտեղ կան, ասենք, կապիտալիստներ ու բանվորներ,
կալվածատերներ ու գյուղացիներ, կուլաներ ու չքավորու-

թյուն և այլն: Բայց ԽՍՀՄ մեջ չկան այլնս այնպիսի գա-
սակարգեր, ինչպիսիք են կապիտալիստները, կալվածատե-
րները, կուլաները և այլն: ԽՍՀՄ մեջ կա միայն յերկու
դասակարգ՝ բանվորներն ու գյուղացիները, վորոնց շահերը
վո՛չ միայն թշնամական չեն, այլ ընդհակառակը—բարեկա-
մական են: Հետևաբար, ԽՍՀՄ մեջ հող չկամ կու-
սակցությունների գոյության համար, ուրեմն նշանակում ե՝
նաև այդ կուսակցությունների աղատության համար: ԽՍՀՄ մեջ հող կա միայն մի կուսակցության՝ Կոմունիս-
տական կուսակցության համար: ԽՍՀՄ կության մեջ կարող
է գոյություն ունենալ միայն մի կուսակցություն—կոմու-
նիստների կուսակցությունը, վորը խիզախորն և մինչև
վերջը պաշտպանում ե բանվորների ու գյուղացիների շա-
հերը: Իսկ վոր նա վատ չի պաշտպանում այդ դասակարգե-
րի շահերը, սրանում չաղիկ թե վորեւ տարակույս լինի:
(Բուռն ծափահարություններ):

Խոսում են գեմոկրատիայի մասին: Բայց ի՞նչ բան է
գեմոկրատիան: Գեմոկրատիան կապիտալիստական յերկրնե-
րում, վորտեղ կան հակամարտ դասակարգեր, վերջին հաշ-
վով գեմոկրատիա յե ուժեղների համար, գեմոկրատիա յե
ունեսը գործամանության համար: Գեմոկրատիան ԽՍՀՄ
մեջ, ընդհակառակը, գեմոկրատիա յե աշխատավորների
համար, այսինքն՝ գեմոկրատիա յե բոլորի համար: Բայց գրանից հետեւում ե, վոր գեմոկրատիզմի հիմքերը
խախտվում են վո՛չ թե ԽՍՀՄ նոր Սահմանադրության
հախադի, այլ բուրժուական սահմանադրությունների կող-
մից: Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր ԽՍՀՄ Սահ-
մանադրությունը միակ մինչև վերջը գեմոկրատիան սահ-
մանադրությունն ե աշխարհում:

Այսպես ե բանը ԽՍՀՄ նոր Սահմանադրության նա-
խադի բուրժուական քննադատության վերաբերմամբ:

ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ՅԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱ- ՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անցնենք Սահմանադրության նախագծի շուրջը յեղած ուղղումների և լրացումների հարցին, վորոնք մտցված են քաղաքացիների կողմից նախագծի համաժողովրդական քըն-նարկման ժամանակի:

Սահմանադրության նախագծի համաժողովրդական քըն-նարկումը, ինչպես հայտնի յէ, բավական նշանակալից քա-նակությամբ ուղղումներ և լրացումներ տվեց: Դրանք բո-լորը հարապարակված են խորհրդային մամուլում: Նկատի ունենալով ուղղումների մեծ բազմազանությունը և նրանց վոչմիատեսակ արժեքը, հարկ կլիներ, իմ կարծիքով, բա-ժանել դրանք յերեք կատեգորիայի:

Առաջին կատեգորիայի ուղղումների տարբերիչ գիծն այն ե, վոր դրանք խոսում են վո՛չ թե Սահմանադրության հարցերի մասին, այլ ապագա որենսդրական մարմինների ընթացիկ որենսդրական աշխատանքի հարցերի մասին: Ապահովագրման առանձին հարցեր, կոլտնտեսային շինա-րարության մի քանի հարցեր, արդյունաբերական շինարա-րության մի քանի հարցեր, Փինանսական գործի հարցեր, — սրանք են այդ ուղղումների թեմաները: Ինչպես յերկում ե, այս ուղղումների հեղինակները չեն պարզել իրենց համար սահմանադրական հարցերի և ընթացիկ որենսդրության հարցերի միջև յեղած տարբերությունը: Հենց այդ պատճա-ռով ել նրանք ջանք են գործ դնում Սահմանադրության մեջ խցկել, վորքան կարելի յէ, շատ որենքներ, գործը տանելով այն ուղղությամբ, վորպեսզի Սահմանադրությունը վերած-

վի որենքների հավաքածուի նման մի բանի: Բայց Սահմա-նադրությունն որենքների հավաքածու չե: Սահմանադրու-թյունը հիմնական որենք է, և միմիայն հիմնական որենք: Սահմանադրությունը չի բացառում, այլ յենթադրում ե ապագա որենսդրական մարմինների ընթացիկ որենսդրական աշխատանքը: Սահմանադրությունն իրավաբանական հիմք է տալիս այդպիսի մարմինների ապագա որենսդրական գոր-ծունելության համար: Այս պատճառով այդ տեսակի ուղ-ղումներն ու լրացումները, վորպես Սահմանադրության հետ ուղղակի առնչություն չունեցող, իմ կարծիքով պետք ե ուղղվեն յերկրի ապագա որենսդրական մարմիններին:

Յերկրորդ կատեգորիային պետք ե վերադրել այնպիսի ուղղումներն ու լրացումները, վորոնք փորձում են Սահմա-նադրության մեջ պատմական տեղեկանքների տարրեր մտցնել կամ դեկլարացիայի տարբեր այն մասին, ինչի վոր դեռ չի հասել Խորհրդային իշխանությունը և ինչի վոր նա պետք ե հասնի ապագայում: Նշել Սահմանադրության մեջ, թե ինչպիսի դժվարություններ են հաղթահարել յերկարատե-տարիների ընթացքում կուսակցությունը, բանվոր դասա-կարգն ու բոլոր աշխատավորները սոցիալիզմի հաղթության համար մղվող կովում, մատնանշել Սահմանադրության մեջ խորհրդային շարժման վերջնական նպատակը, այն ե՝ լիա-կատար կոմունիստական հասարակության կառուցումը, — սրանք են այդ ուղղումների թեմաները, վորոնք կրկնվում են զանազան վարիացիաներով: Յես կարծում եմ, վոր Սահ-մանադրության հետ ուղղակի առնչություն չունեցող այդ-պիսի ուղղումներն ու լրացումները նույնպես պետք ե մի կողմ դրվեն: Սահմանադրությունը գրանցումն և որենսդրա-կան ամրապնդումն ե այն նվաճումների, վորոնք արդեն ձեռք են բերված և ապահովված են: Յեթե մենք չենք ու-գում աղավաղել Սահմանադրության այս հիմնական բնույ-թը, մենք չպետք ե այն լցնենք պատմական տեղեկանքներով անցյալի մասին կամ դեկլարացիաներով ԽՍՀՄ աշխատա-վորների ապագա նվաճումների մասին: Այդ գործի համար մենք ուրիշ ուղիներ և ուրիշ փաստաթղթեր ունենք:

Վերջապես, յերբորդ կատեղորիային պետք եւ վերալրել այնպիսի ուղղումներն ու լրացումները, վորոնք ուղղակի առնչություն ունեն Սահմանադրության նախազծի հետ:

Այս կատեղորիայի ուղղումների նշանակալից մասը խմբագրական բնույթ ունի: Այս պատճառով դրանք կարելի յեր հանձնել ներկա Համագումարի Խմբագրական հանձնաժողովին, վորը, յես կարծում եմ, կատեղծի Համագումարը, հանձնարարելով նրան նոր Սահմանադրության տեքստի վերջնական խմբագրությունը սահմանելը:

Ինչ վերաբերում է յերրորդ կատեղորիայի մնացած ուղղումներին, ապա դրանք ավելի եյտական նշանակություն ունեն և նրանց մասին, ըստիս, հարկ կլինի մի քանի խոսք ասել այստեղ:

1) Ամենից առաջ Սահմանադրության նախազծի առաջին հոդվածի վերաբերյալ ուղղումների մասին: Կա չորս ուղղում: Վոմանք առաջարկում են «բանվորների և գյուղացիների պետություն» բառերի տեղ ասել՝ «աշխատավորների պետություն»: Ուրիշներն առաջարկում են՝ «բանվորների և գյուղացիների պետություն» բառերին ավելացնել՝ «և աշխատավոր ինտելեկտիվների»: Յերրորդներն առաջարկում են «բանվորների և գյուղացիների պետություն» բառերի փոխարեն ասել՝ «ԽՍՀՄ տերիստորիայում բնակվող բոլոր ուսաների և աղջությունների պետություն»: Զորբորդներն առաջարկում են «գյուղացիների» բառը փոխարինել՝ «կոլտնտեսականների» բառով կամ՝ «սոցիալիստական հողադրծության աշխատավորների» բառերով:

Հարկ կա՞ արդյոք ընդունել այս ուղղումները: Յես կարծում եմ, վոր հարկ չկա:

Ինչի՞ մասին եւ խոսում Սահմանադրության նախազծի առաջին հոդվածը: Նա խոսում է խորհրդային հասարակության դաստիարակային կազմի մասին: Կարո՞ղ ենք արդյոք մենք, մարքսիստներս, դանց առնել Սահմանադրության մեջ մեր հասարակության դաստիարակային կազմի հարցը: Վո՞չ, չենք կարող: Խորհրդային հասարակությունը բաղկացած է, ինչպես հայտնի յէ, յերկու դաստիարակերէց:

բանվորներից ու գյուղացիներից: Սահմանադրության նախազծի առաջին հոդվածը հենց սրա մասին ել խոսում է: Հետեւարար, Սահմանադրության նախազծի առաջին հոդվածը ճիշտ եւ արտացոլում մեր հասարակության դաստիարակության կազմը: Կարող են հարցնել՝ իսկ աշխատավոր ինտելեկտիվներին: Ինտելեկտիվներին յերբեք դաստիարակության միջնակարգ լինել, ուղել եւ մնում է միջնախավ, վոր իր անդամներին հավաքարկում եւ հասարակության բոլոր դաստիարակերից: Հին ժամանակ ինտելեկտիվներին հավաքարկում եր աղնվականներից, բուրժուազիայից, մասամբ գյուղացիներից և միայն ամենաաննշան չափով բանվորներից: Մեր խորհրդային ժամանակում ինտելեկտիվիան իր անդամներին հավաքարկում եւ զվարապես բանվորնեցից ու գյուղացիներից: Բայց ինչպես ել վոր նա հավաքարկի և ինչ բնույթ ել վոր կրի, ինտելեկտիվիան այսուամենայնիվ միջնախավ եւ վոչ թե դաստիարակ:

Չի՞ դիպչում արդյոք այս հանգամանքն աշխատավոր ինտելեկտիվիայի իրավունքներին: Ամենակի՞ն: Սահմանադրության նախազծի առաջին հոդվածը խոսում է վո՞չ թե խորհրդային հասարակության տարբեր շերտերի իրավունքների մասին, այլ այդ հասարակության դաստիարակային կազմի մասին: Խորհրդային հասարակության տարբեր շերտերի իրավունքների մասին, այդ թվում՝ աշխատավոր ինտելեկտիվիայի իրավունքների մասին, խոսվում է դիմավորական, քաղաքական, հասարակական և կուլտուրական կյանքի բոլոր վոլորտներում: Այդ վկուխներից պարզ յերկում է, վոր բանվորները, գյուղացիները և աշխատավոր ինտելեկտիվիան միանդամայն իրավահասարակության յերկրի տակածության մասին: Սահմանադրության նախազծի տասերորդ և տասնմեկերորդ զլուխներում: Այդ վկուխներից պարզ յերկում է, վոր բանվորները, գյուղացիները և աշխատավոր ինտելեկտիվիան միանդամայն իրավահասարակության յերկրի տակածության մասին: Հետեւարար, աշխատավոր ինտելեկտիվիայի իրավունքների մասին խոսվում է դիմավորական, քաղաքական, հասարակական և կուլտուրական կյանքի բոլոր վոլորտներում: Հետեւարար, աշխատավոր ինտելեկտիվիայի իրավունքների դիմուլուտ մասին խոսք անդամ չի կարող լինել:

Նույն բանը պետք եւ ասել ԽՍՀՄ կազմի մեջ մտնող աղջութիւն և ուսաների մասին: Սահմանադրության նախազծի յերկրորդ զվարապես արդեն առօլած է, վոր ԽՍՀՄ ի-

բավահավասար ազգերի ազատ միություն է։ Արժե՞՞ արդյոք կրկնել այդ Փորձուղան Սահմանադրության նախագծի առաջին հոդվածում, վորը խոսում է վո՞չ թե խորհրդային հասարակության աղղային կազմի, այլ նրա դասակարգացին կազմի մասին։ Պարզ է, վոր չարժե։ Ինչ վերաբերում է ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ազգերի և ռասաների իրավունքներին, ապա դրանց մասին խոսվում է Սահմանադրության նախագծի յերկրորդ՝ տասերորդ և տասնմեկերորդ գլուխներում։ Այդ գլուխներից պարզ յերեսում է, վոր ԽՍՀՄ ազգերն ու ռասաները միատեսակ իրավունքներ են վայելում յերկրի տնտեսական, քաղաքական, հասարակական ու կուլտուրական կյանքի բոլոր վոլորտներում։ Հետեաբար, խոսք անդամ չի կարող լինել աղղային իրավունքներին դիպչելու մասին։

Նմանապես սիմալ կլիներ «Գյուղացի» բառը փոխարինել «կոլտնտեսական» բառով, կամ «սոցիալիստական հողադործության աշխատավոր» բառերով։ Նախ՝ գյուղացիների մեջ, բացի կոլտնտեսականներից, կան գեռես մի միլիոնից ավելի վոչ-կոլտնտեսականների տնտեսություններ։ Ի՞նչպես վարկել նրանց հետ։ Արդյոք այդ ուղղման հեղինակները չե՞ն մտածում հաշվից դուրս դցել նրանց։ Այդ խելացի չեր լինի։ Յերկրորդ՝ յեթե գյուղացիների մեծամասնությունն սկսել է կոլխոզային տնտեսություն վարել, ապա այդ դեռ չի նշանակում, վոր նա դադարել ե գյուղացիություն լինելուց, վոր նա չունի այլեւ իր անձնական տնտեսությունը, սեփական բակը և այլն։ Յերրորդ՝ այն ժամանակ կարիք կլիներ «բանվոր» բառը նույնական փոխարինել «սոցիալիստական արդյունաբերության աշխատավոր» բառերով, վորը, առաջն, ուղղման հեղինակները, չդիտես ինչ պատճառվ, չեն առաջարկում։ Վերջապես, մի՞թե մեզ մոտ արդեն անհետացել են բանվորների դասակարգը և գյուղացիների դասակարգը։ Իսկ յեթե նրանք չեն անհետացել, ապա արժե՞, արդյոք, չնչել բառարանից նրանց համար սահմանված անունները։ Ուղղման հեղինակներն, ըստ յերեսությն, աչքի առաջ ունեն վո՞չ թե ներկա, այլ ապագա հասարա-

կությունը, յերբ այլես դասակարգեր չեն լինի և յերբ բանվորներն ու գյուղացիները կվերածվեն միասնական կոմունիստական հասարակության աշխատավորների։ Հետեաբար, նրանք բացահայտորեն առաջ են վազում։ Բայց Սահմանադրությունը կազմելիս պետք է յենել վո՞չ թե ապագայից, այլ ներկայից, նրանից, ինչ վոր արդեն կա։ Սահմանադրությունը չի կարող և չպետք է առաջ վազի։

2) Այսուհետև գալիս է Սահմանադրության նախագծի տասնյոթերորդ հոդվածի վերաբերյալ ուղղումը։ Ռւղղումն այն է, վոր առաջարկում են Սահմանադրության նախագծից բոլորովին դուրս դցել տասնյոթերորդ հոդվածը, վորը բոլորովին դուրս դալու իրավունք պահանջանելու մասին։ Յես կարծում եմ, վոր այդ առաջարկը ճիշտ չե, ուստի և չպետք է ընդունվի Համագումարի կողմից։ ԽՍՀՄ իրավահայտար Միութենական հանրապետությունների առաջատակամ միություն է։ Սահմանադրությունից հանել ԽՍՀՄ-ից ապատորեն դուրս դալու իրավունքի վերաբերյալ հոդվածը, նշանակում է խախտել այդ Միության կամավոր հոդվածը։ Կարո՞ղ ենք մենք դիմել այդ քայլին։ Յես կարծույթը։ Կարո՞ղ ենք կարող և չպետք ե դիմենք այդ քայլին։ Ասում են, վոր ԽՍՀՄ մեջ չկա վոչ մի հանրապետություն, վորը ցանկանար դուրս դալ ԽՍՀՄ կազմից, վոր այդ նկատությունով տասնյոթերորդ հոդվածը գործնական նշանակություն չունի։ Վոր մեզ մոտ չկա վոչ մի հանրապետություն, վորը ցանկանար դուրս դալ ԽՍՀՄ կազմից, այդ, իհարկե, ճիշտ է։ Բայց դրանից բնավ չի հետեւում, վորը ցանկանար դուրս դալ ԽՍՀՄ կազմից, վոր մենք Սահմանադրության մեջ չպետք ե Փիքսացիայի յենթարկենք Միութենական հանրապետությունների իրավունքը՝ աղատորեն դուրս դալու ԽՍՀՄ-ից։ ԽՍՀՄ մեջ չկա այնպիսի Միութենական հանրապետություն, վորը ցանկանար ճնշել մի այլ Միութենական հանրապետության։ Բայց դրանից բնավ չի հետեւում, վոր ԽՍՀՄ Սահմանադրությունից պետք ե դուրս հանվի Միութենական հանրապե-

տությունների իրավունքների համաստրության մասին խռովագլածը:

3) Ապա առաջարկ կա՝ Սահմանադրության նախադժեկարգորդ զլուկաը լրացնել մի նոր հոգվածով, վորի բովանդակությունն այն ե, թե ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետությունները, տնտեսական և կուլտուրական զարգացման համապատասխան մակարդակի հասնելիս, կարող են վերափոխվել միութենական խորհրդային սոցիալիստական հանրապետությունների: Կարելի՞ յե արդյոք ընդունել այդ առաջարկը: Յես կարծում եմ, վոր չպետք ե ընդունել այն: Այն ճիշտ չե վո՛չ միայն իր բովանդակությամբ, այլև իր պատճառաբանություններով: Զի կարելի ավտոնոմ հանրապետությունների փոխադրումը միութենական հանրապետությունների կարգը՝ պատճառաբանությամբ, ինչպես նաև չի կարելի այս կամ այն հանրապետությունն ալտոնոմ հանրապետությունների ցուցակում թողնելի պատճառաբանել նրա տնտեսական և կուլտուրական հետամնացությամբ: Դա կլիներ վոչ մարզսիստական, վոչ լենինյան մոռեցում: Որինալի, Թաթարական Հանրապետությունն ալտոնոմ ե մնում, իսկ Ղազախական Հանրապետությունը դառնում ե միութենական, բայց այդ դեռ չինչանակում, վոր Ղազախական Հանրապետությունը կուլտուրական ու տնտեսական զարգացման տեսակետից ավելի բարձր ե կանոնած, քան Թաթարական Հանրապետությունը: Բոլորովին ընդհակառակը: Նույնը կարելի յե առել նաև, որինակ, Մերձլոլդյան Գերմանացիների Ավտոնոմ Հանրապետության և կիրդիզական Միութենական Հանրապետության մասին, վորոնցից առաջինը կուլտուրական ու տնտեսական տեսակետից ավելի բարձր ե, քան յերկրորդը, թեպետև մնում ե ավտոնոմ հանրապետություն:

Վորոնչ են այն հատկանիշները, վորոնց առկայությունը հիմք ե տալիս ավտոնոմ հանրապետությունները միութենական հանրապետությունների կարգը փոխադրելու: Դրանք, այդ հատկանիշները, յերեք են:

Նախ անհրաժեշտ ե, վոր հանրապետությունը ծայրերկրային լինի, ամեն կողմից շրջապատված չլինի ԽՍՀՄ տերիտորիայով: Ինչո՞ւ: Վորովհետև յեթե Միութենական հանրապետությունն իրավունք ե վերաբարձրվում դուրս գտնու ԽՍՀ Միությունից, ապա անհրաժեշտ ե, վոր Միութենական զարձած այդ հանրապետությունը հնարավորություն ունենա տրամադրանորեն ու փաստորեն հարց դնել իր դուրս գալու մասին ԽՍՀՄ-ից: Իսկ այդպիսի հարց կարող ե դնել միմիայն այնպիսի հանրապետություն, վորը, ասենք, սահմանակից ե վորևէ ստար պետության և, հետեւաբար, ամեն կողմից շրջապատված չե ԽՍՀՄ տերիտորիայով: Իհարկե, մեզ մոտ չկան այնպիսի հանրապետություններ, վորոնք փաստորեն հարց դնելին ԽՍՀՄ-ից դուրս գալու մասին: Բայց քանի վոր Միութենական հանրապետության իրավունք ե վերաբարձրվում դուրս գալու ԽՍՀՄ-ից, ապա հարկավոր ե գործն այնպես դնել, վոր այդ իրավունքը գատարել և անիմաստ թղթի կառը չդառնա: Վերցնենք, որինակ, Բաշկիրական կամ Թաթարական Հանրապետությունը: Յենթագրենք, թե այդ ավտոնոմ հանրապետություններն անց կացրել միութենական հանրապետությունների կարգը: Կիալորդանայի՞ն արդյոք նրանք տրամադրանորեն կամ փաստորեն հարց դնել իրենց դուրս գալու մասին ԽՍՀՄ-ից: Վո՛չ, չեյին կարողանա: Ինչո՞ւ: Վորովհետև նրանք բոլոր կողմերից շրջապատված են խորհրդային հանրապետություններով ու մարզերով և նրանք, իսկապես ասած, տեղ չունեն ԽՍՀՄ կազմից դուրս գալու: (Ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ): Այդ պատճառով ել այդպիսի հանրապետությունները միութենական հանրապետությունների կարգն անցկացնելը սկսալ կլիներ:

Յերկրորդ, անհրաժեշտ ե, վորպեսզի այն ազգությունը, վոր խորհրդային հանրապետության իր անունն և տվել, քիչ թե շատ կոմպակտ մեծամասնություն ներկայացնի հանրապետության մեջ: Վերցնենք, որինակ, Ղրիմի Ավտոնոմ Հանրապետությունը: Նա ծայրամասային հանրապետություն ե, բայց Ղրիմի թաթարները մեծամասնու-

թյուն չունեն այդ հանրապետության մեջ, ընդհակառակը, նրանք այստեղ փոքրամասնություն են ներկայացնում: Հետևաբար, սխալ և անտրամաբանական կլիներ Դրիմի հանրապետությունը միութենական հանրապետությունների կարգն անցկացնել:

Յերրորդ, անհրաժեշտ է, վորպեսզի հանրապետությունը շատ ել փոքր չլինի իր բնակչության քանակության խմասով, վորպեսզի նա, ասենք, ունենա վոչ պակաս, այլ դռնե մի միլիոնից ավելի բնակչություն: Ինչո՞ւ: Վորովհետեւ սխալ կլիներ յենթաղըել, թե մանր խորհրդային հանրապետությունը, վոր բնակչության նվազագույն քանակություն և աննշան բանակ ունի, կարող կլիներ պետական անկախ գոյության հույս ունենալ: Հաղիվ թե կարելի յէ կասկածել այն մասին, վոր իմպերիալիստական դիշատիչներն իսկույն եեթ իրենց ձեռքը կցցելին այն:

Ես կարծում եմ, վոր առանց այս յերեք որյեկտիվ հատկանիների առկայության, սխալ կլիներ ներկա պատմական մոմենտում հարց դնել այս կամ այն առտոնո՞մ հանրապետությունը միութենական հանրապետությունների կարգն անցկացնելու մասին:

4) Այսուհետեւ առաջարկում են 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ հոդվածներում ջնջել միութենական հանրապետությունների վարչական-տերիտորիալ բաժանման մանրամասն թվարկումը յերկրների և մարդերի: Յես կարծում եմ, վոր այդ առաջարկությունը նույնպես անընդունելի յէ: ԽՍՀՄ մեջ կան մարդիկ, վորոնք պատրաստ են մեծ սիրով և անխօնջ կերպով ձեել-վոխել յերկրներն ու մարզերը, դրանով խառնաշփոթություն և անվասահություն մտցնելով աշխատանքի մեջ: Սահմանադրության նախադիմն այդ մարդկանց համար սանձ ե ստեղծում: Յեվ այդ շատ լավ է, վորովհետեւ այստեղ, ինչպես և շատ ուրիշ բաներում, մեզ մոտ պահանջվում է վստահության մթնոլորտ, պահանջվում է կայունություն, պարզություն:

5) Հինգերորդ ուղղումը յերաբերում է 33-րդ հոդ-

վածին: Աննպատակահարմար են համարում յերկու պալատների ստեղծումը և առաջարկում են վոչնչացնել Աղջությունների Խորհուրդը: Յես կարծում եմ, վոր այդ ուղղումը նույնպես ճիշտ չէ: Միապալատային սիստեմն ավելի լավ կլիներ, քան յերկալատայինը, յեթե ԽՍՀՄ միասնական աղղային պետություն չէ: ԽՍՀՄ, ինչպես հայտնի յէ, բազմազդ պետություն է: Մեզ մոտ կա գերազույն մարմին, վորակել ներկայացված են ԽՍՀՄ բոլոր աշխատավորների ընդհանուր շահերը՝ անկախ նրանց աղղությունից: Դա—Միության Խորհուրդն է: Բայց ԽՍՀՄ աղղությունները, բացի ընդհանուր շահերից, ունեն նաև իրենց առանձին, յուրահատուկ շահերը, վորոնք կապված են նրանց աղղային առանձնահատկությունների հետ: Կարելի՞ յէ, արդյոք, արհամարհել այդ յուրահատուկ շահերը: Վո՞չ, չի կարելի: Պե՞սք և արդյոք հատուկ գերագույն մարմին, վորն արտացոլեր հենց այդ յուրահատուկ շահերը: Անպայման պետք է: Կամկած չի կարող լինել, վոր առանց այդպիսի մարմնի անհնարին կլիներ այնպիսի բազմազդ պետությունը կառավարելը, ինչպիսին ԽՍՀՄ է: Այդպիսի մարմին և հանդիսանում յերկորդ պալատը, ԽՍՀՄ Աղղությունների Խորհուրդը:

Մատնանշում են յելլուզական և ամերիկական պետությունների պալատմենտական պատմությունը, մատնանշում են այն, վոր յերկալատային սիստեմն այդ յերկրներում միայն մինուսներ և տվել, վոր յերկրորդ պալատը սովորաբար այլասերվում-դառնում և ռեակցիայի կենարոն և արդելակ առաջընթաց շարժման դեմ: Այս բոլորը ճիշտ է: Բայց դա տեղի յէ ունենում այն պատճառով, վոր այդ յերկրներում պալատների միջև հավասարություն չկա: Ինչպես հայտնի յէ, յերկրորդ պալատին հաճախ ավելի իրավունքներ են տալիս, քան առաջինին, և, այնուհետեւ, վորպես կանոն, յերկրորդ պալատը կազմակերպվում է վոչ-դեմոկրատական ճանապարհով, հաճախ նրա անդամներին վերևից նշանակելու ճանապարհով: Անկամկած է,

գոր այդ մինուսները չեն լինի, յեթե հավասարության մտցնենք պալատների միջև և յերկրորդ պալատը կազմակերպենք նույնպես դեմոկրատականորեն, ինչպես և առաջինը:

6) Այնուհետև առաջարկում են Սահմանադրության նախադիմի մի լրացում, վորը արահանջում է յերկու պալատների անդամների քանակի հավասարեցում: Յես կարծում եմ, վոր այս առաջարկը կարելի էլլիներ ընդունել: Դա, իմ կարծիքով, տալիս ե ակներև քաղաքական պլյուսներ, վորովհետև ընդգծում ե պալատների հավասարությունը:

7) Այնուհետև գալիս ե Սահմանադրության նախադիմի մի լրացում, վորի համաձայն առաջարկվում է Ազգությունների Խորհրդի, ինչպես և Միության Խորհրդի պատգամավորներին ընտրել ուղղակի ընտրությունների միջոցով: Յես կարծում եմ, վոր այս առաջարկը նույնպես կարելի լլիներ ընդունել: Ճիշտ ե, դա կարող է ընտրությունների ժամանակի վորոշ տեխնիկական անհարմարություններ ստեղծել: Բայց զբա փոխարեն նաև կտա քաղաքական մեծ շահում, վորովհետև նաև պետք է բարձրացնի Ազգությունների Խորհրդի հեղինակությունը:

8) Այնուհետև գալիս ե 40-րդ հոդվածի լրացումը, վորի համաձայն առաջարկվում է Գերազույն Խորհրդի Նախագահությանն իրավունք վերապահել հրատարակելու ժամանակավոր որենսդրական ակտերը: Յես կարծում եմ, վոր այս լրացումը ճիշտ չե Համագումարի կողմից չպետք ե ընդունվի: Հարկավոր ե, վերջապես, վերջ դնել այն դրությանը, յերբ որենսդրություն ե անում վո՛չ թե վորեն մի մարմին, այլ մարմինների մի ամբողջ շարք: Այդպիսի դրությունը հակառակ է որենքների կայունության սկզբունքին: Իսկ որենքների կայունությունն այժմ մեղ պետք ե ավելի, քան յերբեք: ԽՍՀՄ մեջ որենսդրերի իշխանությունը պետք է իրականացվի միայն մի մարմնի, այն ե՝ ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի կողմից:

9) Այնուհետև Սահմանադրության նախադիմի 48-րդ հոդվածի նկատմամբ առաջարկում են մի լրացում, վորի

համաձայն պահանջում են, վորպեսզի ԽՍՀ Միության Գերազույն Խորհրդի Նախագահության նախագահն ընտրվի վո՛չ թե ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի, այլ յերկրի ամբողջ բնակչության կողմից: Յես կարծում եմ, վոր այս լրացումը ճիշտ չե, վորովհետև չի համապատասխանում մեր Սահմանադրության վորուն: Ըստ մեր Սահմանադրության սիստեմի՝ ԽՍՀՄ մեջ չպետք է լինի ամբողջ բնակչության կողմից, Գերազույն Խորհրդի հետ միահավասար, ընտրվող միանձնյա նախագահ, վորը կարողանար իրեն հակադրել Գերազույն Խորհրդին: ԽՍՀՄ մեջ նախագահը կուեգիալ ե, դա՝ Գերազույն Խորհրդի Նախագահությունն ե՝ ներառյալ նաև Գերազույն Խորհրդի Նախագահության նախագահին, վորին ընտրում ե վո՛չ թե ամբողջ բնակչությունը, այլ Գերազույն Խորհրդը և վորը հաշվետու յե Գերազույն Խորհրդին: Պատմության փորձը ցույց ե տալիս, վոր գերազույն մարմինների այսպիսի կառուցումն ամենից ավելի գեմոկրատական ե, վորն ապահովում է յերկիրն անցանկամի պատահականություններից:

10) Այնուհետև գալիս ե մի ուղղում նույն այդ 48-րդ հոդվածի նկատմամբ: Դա ասում ե՝ ավելացնել ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի Նախագահության նախագահի տեղակալների քանակը մինչեւ 11, այն հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր Միութենական հանրապետությունից մի տեղակալ լինի: Յես կարծում եմ, վոր այս ուղղումը կարելի կլիներ ընդունել, վորովհետև դա լավացնում է գործը և կարող է միայն ամրապնդել ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի Նախագահության հեղինակությունը:

11) Այնուհետև գալիս ե ուղղում 77-րդ հոդվածի վերաբերյալ: Դա պահանջում է կազմակերպել մի նոր համամիութենական ժողովրդական կոմիսարիատ՝ Պաշտպանության Արդյունաբերության ժողկոմատ: Յես կարծում եմ, վոր այս ուղղումը նույնպես հարկավոր է ընդունել (ծափակարություններ), վորովհետև հասել ե ժամանակն այն բանի համար, վոր առանձնացնենք մեր պաշտպանության արդյունաբերությունը և համապատասխան ժողկոմատային:

ձեավորում տանք նրան : Ինձ թվում ե , վոր դա միայն կառող ե բարելավել մեր յերկրի պաշտպանության գործը :

12) Այնուհետև զալիս ե Սահմանադրության նախագծի 124-րդ հոդվածի վերաբերյալ մի ուղղում , վորը պահանջում է փոփոխել այդ հոդվածն այն ուղղությամբ , վորակեսի արգելվի կրօնական ծեսերի կատարումը : Յես կարծում եմ , վոր այս ուղղումը հարկալոր ե մերժել , վորակես մեր Սահմանադրության վորուն չհամապատասխանող :

13) Վերջապես զարձյալ մեկ ուղղում , վորն ավելի կամ պակաս երական բնույթ ունի : Յես խոսում եմ Սահմանադրության նախագծի 135-րդ հոդվածի վերաբերյալ ուղղման մասին : Այդ ուղղումն առաջարկում է ընտրական իրավունքը ներից զրկել պաշտամունքի սպասավորներին , նախակին սպասակ-դվարդիականներին , բոլոր այն նախակին մարդկանց ու անձնավորություններին , վորոնք հանրոգուտ աշխատանքով չեն դրավում , կամ թե , համեստայն դեպս , —սահմանափակել այդ կատեգորիայի անձնավորությունների ընտրական իրավունքները , տալով նրանց միայն ընտրելու , բայց վոչ ընտրվելու իրավունքը : Յես կարծում եմ , վոր այս ուղղումը նույնպես պետք է մերժվի : Խորհրդային իշխանությունը վոչ-աշխատավորական և շահագործող տարրերին ընտրական իրավունքներից զրկել ե վո՛չ թե համբանապես , այլ ժամանակաշրաբես , մինչև վորոշ ժամանակաշրջան : Կար ժամանակ , յերբ այդ տարրերը բացահայտ պատերազմ ենին մղում ժողովրդի դեմ և հակագործում եյին խորհրդային որենքներին : Երանց ընտրական իրավունքից զրկելու վերաբերյալ խորհրդային որենքը Խորհրդային իշխանության պատասխանն եր այդ հակագործությանը : Այդ ըրջանից քիչ ժամանակ չի անցել : Անցած ժամանակաշրջանում մենք հասանք այն բանին , վոր չահազործող դասակարգերը վոչնչացված են , իսկ Խորհրդային իշխանությունը դարձել ե անհաղթելի ուժ : Արդյոք չի՞ հասել ժամանակը վերանայելու այդ որենքը : Յես կարծում եմ , վոր ժամանակը հասել ե : Ասում են , թե դա վտանգավոր ե , քանի վոր յերկրի գերակույն մարմինների մեջ կարող են սոլոսկել Խորհրդային

Քշխանությանը թշնամի տարրեր , նախակին սպիտակ-դվարդիականներից , կուլակներից , տերտերներից վոմանք և այլն : Բայց իսկապես այստեղ ի՞նչ կա վախենալու : Գայլերից վախեցողն անոտա չպետք ե գնա : (Ուրախ աշխուժության դահլիճում , բուռն ծափահարություններ) : Նախ Խորհրդային իշխանությանը թշնամի յեն վոչ բոլոր նախակին կուլակները , սպիտակ-դվարդիականները կամ տերտերները : Յերկրորդ՝ յեթե ժողովուրդը տեղ-տեղ թշնամի մարդիկի ընտրի ել , առաջ այդ կնշանակի , վոր մեր ագիտացիոն աշխատանքը չափից դուրս վատ ե դրված : և վոր մենք լիովին արժանի եյինք այդպիսի խայտառակության . իսկ յեթե մեր ագիտացիոն աշխատանքը բոլցեկորեն ընթանա , ապա ժողովուրդը չի թողնի , վոր իր գերազույն մարմինների մեջ թշնամի մարդիկ մտնեն : Նշանակում ե՝ հարկավոր և աշխատել և վոչ թե նվազալ (բուռն ծափահարություններ) , հարկավոր և աշխատել և վոչ թե սպասել , վոր ամեն ինչ արամագրվի պատրաստի ձեռով , վարչական կարգադրությունների կարգով : Լենինը գեռ 1919 թվին ասում եր , վոր հեռու չե այն ժամանակը , յերբ Խորհրդային իշխանությունն ողտակար կհամարի մտցնելու ընդհանուր ընտրական իրավունք՝ առանց վորեն սահմանափակման : Աւշագրություն դարձրեք՝ առանց վորեն սահմանափակման : Այդ նա ասել ե այն ժամանակ , յերբ ոտարերկրյա ոտղմական ինտերվենցիան գեռ վերացված չեր , իսկ մեր արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը սոսկալի դրության մեջ եյին ոտնվում : Այդ ժամանակից ի վեր անցել ե արդեն 17 տարի : Ժամանակը չե՞ արդյոք , ընկերներ , կատարելու լենինի ցուցումը : Յես կարծում եմ , վոր ժամանակն ե :

Ահա թե ինչ եր ասում Լենինը 1919 թվին «ՌԿ(Պ)կ ծրագրի նախագիծ» իր աշխատության մեջ : Թույլ տվեք կարդալ .

«Անցողիկ պատմական կարիքները սխալ կերպով ընդհանրացնելուց խուսափելու համար՝ ՌԿ(Պ)կ պետք ե պարզաբանի աշխատավոր մասսաներին , վոր քաղաքացիների մի մասին ընտրական իրավունքներից զրկելը

Խորհրդային հանրապետության մեջ բնավ չի վերաբերում, —ինչպես այդ լինում եր բուժուա-դեմոկրատական հանրապետությունների մեծամասնության մեջ, —ցմահ իրավազուրկ հայտարարվող վորոշ կարգի քաղաքացիների, այլ վերաբերում և միայն շահագործողներին, միայն նրանց, ովքեր՝ հակառակ սոցիալիստական Խորհրդային հանրապետության հիմնական որենքների, համառում են իրենց շահագործողական դրության պաշտպանության գործում, կապիտալիստական հարաբերությունների պահպանման դործում։ Հետևաբար, Խորհրդային հանրապետության մեջ, մեկ կողմից, սոցիալիզմի որ-ավուր ամրապնդվելու և շահագործող մնալու կամ կապիտալիստական հարաբերությունները պահպանելու որյեկտիվ հնարավորություն ունեցող մարդկանց թիվը որ-ավուր կրծատվելու հետ միասին ինքնին պահպանում և ընտրական իրավունքից զրկվողների տոկոսը։ Այդ տոկոսը Ռուսաստանում այժմ հազիվ թե յերկու-յերեք տոկոսից ավելի լինի։ Մյուս կողմից արտաքին հարձակումը դադարեցնելը և եքոպրոցրատորների եքսպրոպրիացիայի ավարտելն ամենամոտիկ ապագայում կարող ե, վորոշ պայմաններում, ստեղծել այնպիսի գրություն, յերբ պրոլետարական պետական իշխանությունը կընտրի շահագործողների դիմադրության ճնշման այլ յեղանակներ և կմացնի ընդհանուր ընտրական իրավունք՝ առանց վորհե սահմանափակման։ (Լենին, Հատոր XXIV, էջ 94, Կուսչըտի հրատարակություն, 1935թ.)։

Թվում ե, թե պարզ է։

Այսպես և գործը ԽՍՀՄ Սահմանադրության նախադիչության արված ուղղումների և լրացումների նկատմամբ։

VI

ԽՍՀՄ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դատելով համարյա հինգ ամիս տևող համաժողովրդական քննարկման արդյունքներից, կարելի յէ յենթագրել, վոր Սահմանադրության նախադիչը հավանություն կդանի ներկա Համագումարի կողմից։ (Բուռն ծափահարություններ, վորոնիք փոխարկվում են ովացիայի։ Դակինը վոտքի յէ կանգնելու)։

Մի քանի որից Խորհրդային Միությունը կունենա նոր, ծավալուն սոցիալիստական դեմոկրատիզմի սկզբունքների վրա կառուցված սոցիալիստական Սահմանադրություն։

Դա կլինի մի պատմական փաստաթուղթ, վորը պարզ ու սեղմ, համարյա արձանագրական վոճով, կխոսի ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի տարած հաղթության փաստերի մասին, կապիտալիստական ստրկությունից ԽՍՀՄ աշխատավորների ազատագրման փաստերի մասին, ԽՍՀՄ մեջ ծավալուն, մինչև վերջը հետևողական դեմոկրատիայի հաղթության փաստերի մասին։

Դա կլինի մի փաստաթուղթ, վորը կվկայի, թե այն, ինչ մասին յերազել են և չարունակում են յերազել միլիոնավոր ազնիմ մարդիկ կապիտալիստական յերկրներում, — արդեն իրականացվել ե ԽՍՀՄ մեջ։ (Բուռն ծափահարություններ)։

Դա կլինի մի փաստաթուղթ, վորը կվկայի, թե այն, ինչ վոր իրականացված ե ԽՍՀՄ մեջ, լիովին կարող ե իրականացվել նաև մյուս յերկրներում։ (Բուռն ծափահարություններ)։

Բայց գրանից հետևում է, վոր ԽՍՀՄ նոր Սահմանադրության միջազգային նշանակությունը հաղիկ թե կարելի լինի գերազնահատել:

Այժմ, յերբ Փաշիզմի պղտոր ալիքը թուք ու մուր և թափում բանվոր գասակարգի սոցիալիստական շարժման վրա և ցեխի հետ և խառնում քաղաքակերթ աշխարհի լավագույն մարդկանց դեմոկրատական ձգտումները, ԽՍՀՄ նոր Սահմանադրությունը մի մեղադրական ակտ կլինի Փաշիզմի դեմ, մի ակտ, վորն ասում է, թե սոցիալիզմը և դեմոկրատիան անպարտելի յեն: (Ծափահարություններ): ԽՍՀՄ նոր Սահմանադրությունը բարոյական ոգնություն և իրականաժամկություն կլինի բոլոր նրանց համար, ովքեր այժմ կոիվ են մղում Փաշիստական բարքարոսության դեմ: (Բուռն ծափահարություններ):

Ե՛լ ավելի մեծ նշանակություն ունի ԽՍՀՄ նոր Սահմանադրությունը ԽՍՀՄ ժողովուրդների համար: Յեթե կապիտալիստական յերկրների ժողովուրդների համար ԽՍՀՄ Սահմանադրությունը կունենա զործողությունների ծրագրի նշանակություն, ապա ԽՍՀՄ ժողովուրդների համար նաև ունի իրենց պայքարի հանրադումարի նշանակություն, մարդկության աղաստագրման մակատում նրանց տարած հաղթությունների հանրադումարի նշանակություն: Վորպես արդյունք պայքարի ու զրկանքների անցած ուղու՝ հաճելի ու բերկրալի յե ունենալիր սեփական Սահմանադրությունը, վորը խոսում է մեր հաղթությունների պառազների մասին: Հաճելի ու բերկրալի յե գիտենալ, թե ինչի համար են մարտընչել մեր մարդիկ և ինչպես են ձեռք բերել նրանք համաշխարհային-պատմական հաղթությունը: Հաճելի ու բերկրալի յե գիտենալ, վոր մեր մարդկանց առատորեն թափած արյունը ապարդյուն չի անցել, վոր այդ արյունն իր արդյունքներն ե ավել: (Յերկարատև ծափահարություններ): Դա հողեպես զինում է մեր բանվոր գասակարգին, մեր գյուղացիությանը, մեր աշխատավոր ինտելիգենցիային: Դա առաջ է շարժում և բարձրացնում է որինական հպարտության զգացմունքը: Դա ամրապնդում է հավատը

դեպի մեր ուժերը և մորիլիզացիայի յե յենթարկում նոր պայքարի՝ կոմունիզմի նորանոր հաղթություններ նվաճելու համար: (Բուռն ովացիա: Ամբողջ դահլիճը վոտքի յե կանգնում: Վորոտալից «ուռա»: Ընդհանուր բացականչություններ՝ «Կեցցե՛ ընկեր Ստալինը»: Համագումարը հոտընկայս յերգում և «Ինտերնացիոնալը»: «Ինտերնացիոնալը» յերգելուց հետո ովացիան վերսկվում է: Բացականչություններ՝ «Ուռա»», «Կեցցե՛ մեր առաջնորդ ընկեր Ստալինը»):

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
VIII Ա.ՐՏԱԿԱ.ՐԳ ՀԱ.ՄԱ.ԳՈՒՄԱ.ՐԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ԸՆԿԵՐ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
1936 թ. դեկտեմբերի 5-ին

Համագումարի պատգամավորները փոքրիկալից ռվացիայով են դիմավորում ընկ. ՍՏԱԼԻՆԻՆ. հնչում են բացականչություններ՝ «Ռուա՛ ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ», «Կեցցե՛ ընկեր ՍՏԱԼԻՆԸ», «Կեցցե՛ մե՞ր սիրելի ընկեր ՍՏԱԼԻՆԸ», «Կեցցե՛ նոր Սահմանադրությունն ստեղծագործող ընկեր ՍՏԱԼԻՆԸ», «Կեցցե՛ Ստալինյան Սահմանադրությունը: Ռուա՛»:

Ընկերնե՛ր: Խմբագրական Հանձնաժողովն ավարտեց իր աշխատանքը: Վորաբեա արդյունք Խմբագրական Հանձնաժողովի աշխատանքի՝ ստացվեց Սահմանադրության վերջնական տեքստի նախադիմք: Նախադիմքը բաժանված է Համագումարի բոլոր անդամներին: Հետեւաբար, Համագումարը ծանոթ է դրան:

Ինչպես յերեսում է նախադիմք, Խմբագրական Հանձնաժողովը մտցրեց ընդամենը 43 ուղղում: Այդ ուղղումները վերաբերեցին Սահմանադրության նախադիմքի 32 հոդվածներին, մտցնելով նրանց մեջ այս կամ այն վորոխությունները: Նախադիմքի մնացած 114 հոդվածները մնացին անփոփոխ:

43 ուղղումներից քիչ թե շատ եյտկան կարելի յեր ընդունել կեց կամ յոթն ուղղում:

Ի՞նչ ուղղումներ են դրանք:

Նախ և առաջ՝ ուղղում 8-րդ հոդվածի վերաբերմամբ: Սահմանադրության նախադիմքում հոդվածը ձևակերպված է այսպես:

«Կոլտնտեսությունների զբաղեցրած հողն ամրացվում է նրանց՝ անժամկետ ոգտագործելու համար, այսինքն՝ առհավետ»:

Նոր ձևակերպումը տալիս է հոդվածի հետեւյալ տեքստը:

«Կոլտնտեսությունների զբաղեցրած հողն ամրացվում է նրանց՝ անվճար և անժամկետ ոգտագործելու համար, այսինքն՝ առհավետ»:

Յես կարծում եմ, վոր այս ուղղումը պարզ է և բացարության կարիք չի գգում:

Յերկրորդ ուղղումը վերաբերում է Սահմանադրության նախադիմքի 10-րդ հոդվածին: Այդ հոդվածի հին ձևակերպումն է.

«Քաղաքացիների անձնական սեփականությունը՝ նրանց աշխատանքային յեկամուտների ու խնայությունների նկատմամբ, բնակելի տան և ոժանդակ տնային տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության և գործածության առարկաների նկատմամբ, ինչպես նաև անձնական սպառման ու հարմարության առարկաների նկատմամբ, պահպանվում և որենքով»:

10-րդ հոդվածի նոր ձևակերպումը.

«Քաղաքացիների անձնական սեփականության իրավունքը՝ նրանց աշխատանքային յեկամուտների ու խնայությունների նկատմամբ, բնակելի տան և տնային ոժանդակ տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության և առողյա գործածության առարկաների նկատմամբ, անձնական սպառման ու հարմարության առարկաների նկատմամբ, ինչպես նաև քաղաքացիների անվճար սեփականության ժառանգման իրավունքը, պահպանվում և որենքով»:

Այս ուղղումը պարզ է և, յես կարծում եմ, հատուկ բացարության կարիք չի գգում:

Յերրորդ ուղղումը վերաբերում է 35-րդ հոդվածին։ Այդ հոդվածի հին ձևակերպումն է։

«Աղջությունների Խորհուրդը կազմվում է այն պատգամավորներից, վորոնց ընտրում են միութենական ու ամփոնում հանրապետությունների Գերագույն Խորհուրդները և ավտոնոմ մարզերի աշխատավորության պատգամավորների Խորհուրդները՝ առանձին պատգամավորը յուրաքանչյուր միութենական հանրապետությունից, հնդական պատգամավորը յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետությունից և յերկուսական պատգամավորը յուրաքանչյուր ավտոնոմ մարզեց»։

Այդ հոդվածի նոր ձևակերպումն է։

«Աղջությունների Խորհուրդն ընտրում են ԽՍՀՄ ժաղավագիներն ըստ միութենական և ավտոնոմ հանրապետությունների, ավտոնոմ մարզերի ու ազգային ոկրուգների, հետևյալ նորմայով։ Խանհիմգական պատգամավորը յուրաքանչյուր միութենական հանրապետությունից, տասնմեկական պատգամավորը յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետությունից, հնգական պատգամավորը յուրաքանչյուր ավտոնոմ մարզեց և մեկական պատգամավորը յուրաքանչյուր ազգային ոկրուգից»։

Հետևաբար, այս հոդվածում պայմանների հավասարությունը թե՛ նրանց քանակական կազմի և թե՛ նրանց դեմոկրատական իստուցման իմաստով՝ լրիվ պահպանված է։

Չորրորդ ուղղումը վերաբերում է 40-րդ հոդվածին։ Հոդվածի հին ձևակերպումն է։

«ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընդունած որենքները հրապարակվում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի և քարտուղարի ստորագրությամբ»։

Հոդվածի նոր ձևակերպումը։

«ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընդունած որենքները հրապարակվում են միութենական հանրապետությունների լիգուներով, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի և քարտուղարի ստորագրությամբ»։

Ուղղումը հասկանալի յէ և այն, իմ կարծիքով, նույնական բացատրության կարիք չի դդում։

Հետևաբար, որենքները հրապարակվելու յեն 11 լեզվով։

Հինգերորդ ուղղումը վերաբերում է 48-րդ հոդվածին։ Հին ձևակերպումով նախատեսվում եր Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի չորս տեղակալ, նոր ձևակերպումով նախատեսվում է 11 տեղակալ՝ ըստ միութենական հանրապետությունների թվի։

Վեցերորդ ուղղումը վերաբերում է 77-րդ հոդվածին։ Այդ ուղղումն այն է, վոր բացի գոյություն ունեցող համամիութենական ժողկոմաներից, յենթադրվում է կազմել մի նոր ժողկոման ևս՝ պաշտպանության արդյունաբերության ժողկոման։ Այդ ուղղումը նույնպես բացատրության կարիք չի դդում։

Վերջապես, յոթերորդ ուղղումը։ Այն վերաբերում է 49-րդ հոդվածի «կ» կետին։ Հոդվածի հին ձևակերպումն է։

«ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում նախագահությունը պատերազմի վիճակ և հայտարարում ԽՍՀՄ վրա ուղղմական հարձակում կատարվելու դեպքում։

Հոդվածի նոր ձևակերպումը։

«ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում նախագահությունը պատերազմի վիճակ և հայտարարում ԽՍՀՄ վրա ուղղմական հարձակում կատարվելու դեպքում, կամ այն դեպքում, յերք անհրաժեշտ և կատարել ազբեկացից փոխադարձարար պաշտպանվելու միջազգային պայմանագրային պարտավորություններ»։ (Բուռն ծափակարություններ)։

Ինչ վերաբերում է մյուս ուղղումներին, ապա դրանք հայական նշանակություն չունեն, զուտ խմբագրական բնույթ ևն կրում և, յես կարծում եմ, հատուկ քննության կարիք չեն դդում։

Բնդհանուր հետևողությունը. ԽՍՀՄ Սահմանադրությունը

մշակելու և վերջնականապես հղկելու դործում համաժողովը վըրդական քննարկումն անկասկած հսկայական ողուտ բերեց : (Յերկարածու ովացիա ընկեր Ստալինի հասցեյին, ամբողջ դահլիճում վոլգույնի բացականչություններ են լսվում ի պատիվ ընկեր Ստալինի՝ «Ուռա՛ ընկեր Ստալինին, ուռա՛») :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ընկեր ի. վ. Ստալինի գեկուցումը Խորհուրդների VIII համամիութենական արտակարգ համագումարում ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին, 1936 թ. նոյեմբերի 25-ին

I	Սահմանադրական Հանձնաժողովի կազմումը	և նրա խնդիրները	7
II	1924 թվից մինչև 1936 թիվն ընկած ժամանակաշրջանում ԽՍՀՄ կյանքում տեղի ունեցած փոփոխությունները		9
III	Սահմանադրության նախագծի հիմնական առանձնահատկությունները		20
IV	Սահմանադրության նախագծի բուրժուական քննադատություններ		28
V	Ուղղումներ և լրացումներ Սահմանադրության նախագծի վերաբերյալ		38
VI	ԽՍՀՄ նոր Սահմանադրության նշանակությունը ԽՍՀ Միության Խորհուրդների VIII արտակարգ համագումարի Խմբագրական Հանձնաժողովի նախագահ ընկեր ի. վ. Ստալինի գեկուցումը 1936 թ. գեկտեմբերի 5-ին		53
			56

Թարգմանության խմբագիր Բ. Մարտիրոսյան

Տեխն. խմբագիր Ս. Խաչատրյան

Սրբագրիչ Գ. Զիդեցյան

Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր № Կ-3277, հրատ. № 570

Պատվեր № 74, տիրած 15.000

Հանձնված և արտադրության 16/IV 1938 թ.

Ստորագրված և սպագրելու 7/V 1938 թ.

Գինը 50 կ.

Դեմքրատ-Քաղաքական գրականության

հրատարակչության տպարան, Յերևան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0184179

256

ԳԻԱԸ 50 Կ.

И. В. СТАЛИН
О ПРОЕКТЕ КОНСТИТУЦИИ
СОЮЗА ССР

Армгиз—Издательство полит. литературы.
Ереван, 1938